Արտաշես Քալանթարյան

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Դրամա երկու մասից)

Գործող Անձինք
ՏԻԳՐԱՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ - Շրջգործկոմի աշխատակից
ԱՆԱՀԻՏ - նրա կինը
ՎԱՉԵ, ԳՈՀԱՐ - նրանց զավակները
ՀՈՒՓՍԻՄԵ - հարևանուհի
ԱՋԱՏ - Տիգրանի ընկերը
ԳՈՒՐԳԵՆ - բանվոր
ԶԱՐՈՒՀԻ - նրա կինը
ԼԵՎՈՆ - դուդուկահար
ԶԱՆԳԻ, ԶՐԱՆԳԻ - նրա նվագող ընկերները
ՄԻՆԱՍՅԱՆ - Այցելու
ՀԱՄՄԻԿ - Այցելու
ՀԱՅԿ - Գոհարի ընկերը

(Ներկայացմանը մասնակցում են նաև մի խումբ հիվանդ-հարբեցողներ)

Գործողության ժամանակը՝ մեր օրերը

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

(Բեմի հետին պլանում կիսաշրջանաձև դասավորված են հիվանդանոցային երկաթյա մահճակալներ: Տարբեր դիրքերով մահճակալներին պառկած կամ նստած են ալկոհոլիկներ՝ ջղային շարժումներով, կիսախելագար աչքերով: Ամեն մեկն ինչ-որ բանով զբաղված է, հավանաբար յուրաքանչյուրն իր նախկին մասնագիտությունն է մտաբերում: Հետո նրանք սկսում են մանկական խաղ խաղալ, հաշվելով՝ Ալա-բալա-նի-ցա…և այլն

Պիեսի բոլոր գործողությունները ընթանում են այդ հիվանդների աչքի առջև: Երբեմն-երբեմն նաև հնչում է նրանց ռեակցիան: Նրանց մանկամիտ երգ ու հաշվով են սկսվում և ավարտվում գրեթե բոլոր պատկերները:

Ահա հենց այդ հիվանդներից մեկը բարձրանում է տեղից ու դանդաղ մոտենում բեմեզրին)

ՏԻԳՐԱՆ -Ոչինչ չեմ հասկանում: Ինչպե՞ս ես հայտնվեցի այստեղ: Ես՝ Տիգրան Մանվելյանս ի՞նչ գործ ունեմ այս մարդկանց հետ: Միթե՞ ես նրանցից մեկն եմ և ես էլ եմ նրանց հետ երգում այս մանկամիտ երգերը:

«Փոքրիկ պապան գնաց բանակ…»

Առաջ, շատ առաջ երբ պատահաբար անցնում էի այս շենքի մոտով, տեսնում էի ալկոհոլիկների գունատ, աղավաղված դեմքերը, դողացող ձեռքերը ինձ թվում էր, թե շատ բնական է, որ կա այս հիվանդանոցը և կան այս խեղճ, դժբախտ հարբեցողները: Բայց մտքովս երբեք, երբեք չեր անցնում, թե մի օր էլ ես կհայտնվեմ այստեղ, նրանց մեջ:

Ինչո՞ւ: Ինչո՞ւ է մեզ թվում, թե վատ բաները միայն ուրիշների հետ են կատարվում: Որ հարբեցող են դառնում ուրիշները, հիվանդանում են ուրիշները, խելագարվում են ուրիշները, մեռնում են ուրիշները… Միայն ուրիշները… Մեր մեջ, մեր կողքին, բայց ուրիշները: Միայն ուրիշները: Եվ ոչ թե մենք: Ոչ թե ես: Ես:

Ուրեմն թող ոչ ոք չպարծենա: Հավատացեք ինձ, մարդ չի զգում, չի հասկանում, թե երբ է սկսվում և ինչից է սկսվում իր անկումը: Եվ ես էլ չգիտեմ: Ենթադրում եմ, միայն ենթադրում եմ, որ սկսվեց հենց այն օրը, երբ ես շատ ուժեղ էի զգում ինձ, շատ առողջ էի և շատ բարձր տրամադրությամբ եկա տուն:

Ես ձեզ կպատմեմ, թե ինչ օր էր դա և ինչ կատարվեց հետս: Իսկ դուք մտածեք, խնդրում եմ ձեզ, մտածեք քանի դեռ ուշ չէ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Շրջվում է ու կանչում)

Անահիտ…

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Տիգրան Մանվելյանի տան հյուրասենյակը: Սովորական, ճաշակով կահավորված սենյակ: Ոչ ոք չկա: Ներս է մտնում Տիգրանը)

ՏԻԳՐԱՆ -Անահիտ, Անահիտ, Անահիտ…

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ է պատահել: Տիգրա՞ն, Տիգրա՞ ն: Վա՞յ, խմա՞ծ ես:

ՏԻԳՐԱՆ - Այո, Անահիտ ջան, խմել եմ: Ճար չկար: Տղերքը կպան, թե՝ մաղարիչ, մաղարիչ… Ես էլ գանձապահից մի քիչ փող ուզեցի ու …

ԱՆԱՀԻՏ - Լավ ես արել: Բայց այդ ի՞նչ մաղարիչ է: Ինչի՞ համար:

ՏԻԳՐԱՆ - Տիկին, կարո՞ղ եք ասել, թե ով է կանգնած ձեր առջև:

ԱՆԱՀԻՏ – Իմ հարբած ամուսինը:

ՏԻԳՐԱՆ - Ոչ միայն: Ձեր առջև կանգնած է շրջսովետի գործկոմի բնակարանների բաշխման բաժնի վարիչ Տիգրան Մանվելյանը:

ԱՆԱՀԻՏ - Վա՞յ, Տիգրան ջան, ճի՞շտ:

ՏԻԳՐԱՆ - Ուրեմն արդարություն կա, կա: Չորսն թեկնածուներ կային: Ես վերջինն էի, Անահիտ: Ասում էին, թե իբր բաժնի վարիչ դառնալը այնքան էլ էժան չի նստում: Թե իբր առնվազն վերևներից զանգեր են պետք… Էս է պետք, էն է պետք…Իսկ ինձ նախագահը իր մոտ կանչեց ու ասաց, -Տիգրան, ի՞նչ ես կարծում, եթե քեզ բաժնի վարիչ նշանակենք: Վախենում եմ- անկեղծորեն խոստովանեցի ես: «Եթե վախենում ես, ասաց, - ուրեմն կաշխատես: Ես էլ նրանցից եմ վախենում, ովքեր չեն վախենում: Գնա և ընդունիր գործերը»:

ԱՆԱՀԻՏ – Տիգրան ջան, ինչքան ուրախ եմ քեզ համար…

ՏԻԳՐԱՆ – Անահիտ ջան, դու գիտե՞ս, չէ, ամբողջ կյանքում երազել եմ մի այնպիսի աշխատանք, որ կարողանամ ուրախություն պարգևել մարդկանց, լավություն, բարություն անել մարդկանց: Պատկերացնում ես, մարդուն կանչում ես ու ասում… «Գործկոմը որոշել է ձեզ երեք սենյականոց բնակարան հատկացնել: Խնդրեմ, վերցրեք օրդերը: Երջանիկ եղեք»: Հենց այսօր, մի բանվոր եկավ՝ երեսուն տարվա շինարար է,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

տասնմեկ երեխա ունի: Պատկերացնում ես առաջ վեցն են եղել: Սարգսյանն այնքան է տարել-բերել, որ տասնմեկն են դառել: Իսկ ես նայեցի գործն ու ասացի. Վաղը կգաք ես ձեզ երեք հասցե կտամ, զանգահարեք, որ շենքը կուզեք, ընտրեք…

ԱՆԱՀԻՏ – Ինչ լավ ես արել, Տիգրան…

(դռան զանգ: ներս է մտնում տիկին Հռիփսիմեն):

ՀՌԻՓՍԻՄԵ – Անահիտ ջան, լվացք էի անում, փոշիս պրծավ, մի քիչ տուր, վաղը առնեմ կտամ…

ԱՆԱՀԻՏ – Հիմա տիկին Հռիփսիմե… *(դուրս է գալիս)*

ՀՌԻՓՍԻՄԵ – Բարև Տիգրան ջան… Շնորհավորում եմ:

ՏԻԳՐԱՆ – Ինչը…

ՀՌԻՓՍԻՄԵ– Նոր պաշտոնդ:

ՏԻԳՐԱՆ – Շնորհակալ եմ տիկին Հռիփսիմե, բայց դուք որտեղի՞ց գիտեք…

ՀՌԻՓՍԻՄԵ – Երազումս եմ տեսել, Տիգրան ջան:

ՏԻԳՐԱՆ – Ձեր երազները…

(ներս է մտնում Անահիտը, մի տուփ լվացքի փոշին ձեռքին)

ՀՌԻՓՍԻՄԵ – Անահիտ ջան, աչքդ լույս… քեզ էլ եմ շնորհավորում… վայ խոսքով ընկա, լվացքս մնաց *(ուզում է գնալ:)*

ԱՆԱՀԻՏ – Տիկին Հռիփսիմե, փոշին…

ՀՌԻՓՍԻՄԵ – Տուր Անահիտ ջան, տուր: Ուրախությունից խելքս թռցրել եմ…

(դուրս է գնում)

ՏԻԳՐԱՆ – Այ քեզ մարգարե…Որտեղի՞ց է իմացել…

ԱՆԱՀԻՏ – Իմիջիայլոց նա ամեն ինչ գիտի. Ամեն ինչ իմանում է նույնիսկ առանց տանից դուրս գալու:

(ներս են մտնում Վաչեն ու Գոհարիկը)

ՎԱՉԵ – Բարև, հայրիկ ջան… Մամա սոված ենք…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԱՀԻՏ – Վաչե, շնորհավորիր հայրիկին, նա այսօրվանից բնակարանների բաշխման բաժնի պետն է:

ՎԱՉԵ – Ուռռա… նոր բնակարան ստացանք…

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ բնակարան:

ՎԱՉԵ – Ոնց թե, հայրիկը հո միայն ուրիշներին չի բաշխելու, արանքում մի կարգին բնակարան էլ մեզ կբաշխի, չէ՞: Մինչև երբ պիտի ես Գոհարիկի նազերն ու դեզադորների հոտերը տանեմ…

ԳՈՀԱՐԻԿ – Բա որ ես քո խռմփոցից ամբողջ գիշեր վեր եմ թռչում…

ՎԱՉԵ – Տեսնում ես, մամ, ուրեմն մեր բնակարանի հարցն, ինչպես թերթերն են գրում, առաջնահերթ խնդիր է…

ՏԻԳՐԱՆ – Առաջնահերթ խնդիրը քո ականջները քաշելու խնդիրն է: Նույնիսկ կատակով մեկ էլ այդ մասին չլսեմ: Չորս հոգով երեք սենյականոց բնակարանում ենք ապրում: Ուրիշ էլ ինչ եք ուզում: Գիտե՞ս ինչքան ընտանիքներ տուն չունեն, ոչ մի տուն: Մի անգամ արի ինձ մոտ, ցուցակները ցույց տամ: Գիշերները չես քնի:

ՎԱՉԵ – Չեմ քնի… Այդ հարցում՝ կներեք: Գոհարիկը որ վրաս ջուր չլցնի, ընդհանրապես չեմ արթնանա:

ԱՆԱՀԻՏ – Մի նեղանա Տիգրան ջան, մեծացել են երեխաները, իսկապես դժվար է՝ հատկապես Գոհարիկի համար: Ուսանողուհի աղջիկ է… մի ննջարանում…

ՏԻԳՐԱՆ – Անահիտ… Անահիտ ջան, ի վերջո կարելի է պատշգամբի մի անկյունը կտրել ու մագնիտոֆոնն ու Վաչեին տեղափոխել այնտեղ: Չէ՞:

ԱՆԱՀԻՏ- Կարելի է, իհարկե: Միայն թե կտրող լինի: Երեք տարի է՝ խոսում ենք

ՏԻԳՐԱՆ– Ես կկտրեմ:

ՎԱՉԵ – Եղավ, հայրիկ ջան, որ դու պատշգամբը կտրես, ես էլ իմ ձայնը կկտրեմ:

ՏԻԳՐԱՆ - *(ծիծաղում է)* Եղավ…

(Դռան զանգ)

(Տիգրանը բացում է դուռը, ներս է մտնում Ազատը: Նրա ձեռքին փոքրիկ ճամպրուկ կա):

ԱԶԱՏ- Բարի երեկո ձեզ:

ՏԻԳՐԱՆ - Էս ո՞ր խաչից է…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՉԵ- Վայ, Ազատ քեռի, շատ-շատ շնորհակալ եմ որ եկաք:

ԱԶԱՏ- Վաչեն չի՞ ասել: Զանգ տվեց, թե՝ Ազատ քեռի, հասիր մագտինաֆոնս ձեռքից գնում է:

ՎԱՉԵ –Գնում է, էլի, դինամիկներից մեկը չի աշխատում:

ԱԶԱՏ- Հիմա, ախպոր տղա, չմտածես, կսարքենք:

ՏԻԳՐԱՆ - Էդ ի՞նչ բան է, ասում էիր խոսելու է, հա՞…

ՎԱՉԵ- Ազատ քեռի, դինամիկս…

ԱԶԱՏ- Հիմա, Վաչե ջան: Կրակն ընկանք, գաղափարը տվեցինք: Ախր դա մեր մասնաճյուղի հետ կապ էլ չունի, բայց որ դիրեկտորին ասացի, թե սկզբունքորեն կարող եմ խոսող մեքենա հավաքել, այնպես ոգևորվեց, որ ստիպեց իմ ամբողջ գործը թողնել, դոկտորական դիսերտացիաս թողնել և միայն այդ մեքենայով զբաղվել: Հիմա գիշեր-ցերեկ աշխատում եմ, որ հասցնեմ:

ՏԻԳՐԱՆ - Ինչի՞ն հասցնեք:

ԱԶԱՏ- Ամսի ութին…Գլխավոր դիրեկտորն է գալու…Պետք է պատրաստ լինենք, որ հենց գլխավորը մտնի, մեքենան ասի՝ «բարով էք եկել, ընկեր Մակաուզյան…»:

ՏԻԳՐԱՆ - Հենց միայն դրա՞ համար:

ԱԶԱՏ- Միայն դրա համար:

ՏԻԳՐԱՆ - Է, մեկդ չէիք կարող մեքենայի ետևում կանգնել ու ասել բարով եք եկել ընկել, Մակաուզյան:

ԱԶԱՏ- Երանի քեզ, կատակում ես…

ՏԻԳՐԱՆ - Բա ի՞նչ անեմ…է, Ազատ ջան, որ իմանաս ինչ է եղել…

ԱԶԱՏ- *(Լրջանալով)* Ի՞նչ է եղել…

ԱՆԱՀԻՏ- Է, Ազատ ջան, լեզուս էլ չի պտտվում, որ ասեմ…Տիգրանին բնակարանների բաժնի պետ են նշանակել:

ԲՈԼՈՐԸ- Հա, հա…*(ծիծաղում են)*

ԱԶԱՏ - Տիգրա՞ն: Ձայն էլ չես հանում, մեր տղա…

ՏԻԳՐԱՆ - Առաջին օրն է, Ազատ ջան, դեռ ուշքի չենք եկել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱԶԱՏ – Սրտանց ուրախ եմ, ախպեր ջան, վաղուց ժամանակն էր, որ մեր սերունդն էլ արևի երես դուրս գար: Լավ է: Լավ, հիմա ստիպված կլինես իմ գործով էլ զբաղվել:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ գործ, Ազատ:

ԱԶԱՏ- Ես ձեր բաժնում վաղուց դիմում ունեմ: Չորս հոգով երկու սենյակում ենք ապրում: Երեխաները մեծացել, են ամոթ էլ է՝ մի ննջարանում:

ՎԱՉԵ – Տեսաք:

ՏԻԳՐԱՆ – Բայց ձեր տունն աչքիս մեծ էր երևում:

ԱԶԱՏ – Հա, դե հին շենք է: Երկու սենյակը միասին 40 քառակուսի մետր է, բայց…

ՏԻԳՐԱՆ – Չի հասնում:

ԲՈԼՈՐԸ - Ինչի՞ չի հասնում:

ՏԻԳՐԱՆ - Նոր բնակարան չի հասնում: Քառակուսին մի բան էլ ավել է: Միակ հնարավոր ելքը փոխանակումն է՝ նույն տարածությամբ երեք սենյակ:

ԱԶԱՏ - Ես էլ էդ եմ ասում, էլի…հո պալատներ չեմ ուզում, կօգնե՞ս Տիգրան ջան…

ՏԻԳՐԱՆ – Գործի մասին գործի տեղում…Անահիտ, սովից կոտորվելու ենք:

ԱՆԱՀԻՏ- Վայ, լրիվ մոռացել էի:

ՎԱՉԵ - Ազատ քեռի…

ԱԶԱՏ - Հա, գնացինք, Վաչիկ ջան…

ՏԻԳՐԱՆ - Ո՞ւր, Ազատ: Ճաշ կուտենք նոր…

ՎԱՉԵ – Լավ էլի, պապ… Ազատ քեռի, ախր դինամիկս… գիտե՞ք ինչ է եղել, Ազատ քեռի…

ԱԶԱՏ – Գործի մասին, գործի տեղում, Վաչե, գնացինք:

(Դուրս են գալիս):

ԱՆԱՀԻՏ- Մի քիչ լավ չստացվեց, Տիգրան ջան:

ՏԻԳՐԱՆ - Ինչը՞:

ԱՆԱՀԻՏ- Չոր պատասխանեցիր Ազատին… Նրանց վիճակը իսկապես լավ չէ, դու էլ գիտես:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Իսկ ի՞նչ ասացի որ…

ԱՆԱՀԻՏ- Չպիտի ասեիր՝ գործի մասին, գործի տեղում:

ՏԻԳՐԱՆ - Անահիտ ջան, բայց ես հո ամբողջ օրը բնակարանների մասին չեմ խոսելու:

ԱՆԱՀԻՏ- Ազատը քո ամենամոտ ընկերն է… Ուսանողական տարիներից սկսած: Ի վերջո եթե նա չլիներ, երևի ես էլ այս տանը չլինեի… Մոռացել ես…

ՏԻԳՐԱՆ - Պահ, ես էի ուղարկել, հո իրեն –իրեն չեր եկել:

ԱՆԱՀԻՏ- Տիգրան նա կարող էր չգալ, դու էլ կշարունակեիր ամաչել, ու պատմությունը կվերջանար…

ՏԻԳՐԱՆ – Լավ, կատակը մի կողմ…Անահիտ, մեկընդմիշտ դու էլ իմացիր, որ իմ գործում ընկեր, բարեկամ, հարազատ, գոյություն չպետք է ունենա: Երդվել եմ, օրենքի ոչ մի խախտում թույլ չեմ տալու: Ոչ մի: Օրենք, օրենք… օրենքով հասնում է, խնդրեմ, ստացիր: Չի հասնում կներեք: Ես իմ աչքով տեսա, թե Սարգսյանն ուր հասավ: Ամեն ինչ էր, իսկ հիմա ոչինչ, ոչնչություն:

(Դռան զանգ: Անահիտը գնում է դուռը բացելու: Ներս եմ մտնում Գուրգենն ու Զարուհին տասնմեկ երեխաների հետ: Երեխաները ինչ որ փաթեթ են բերում թևատակերին դրած: Անահիտը շփոթված է, Տիգրանը նույնպես:)

ԳՈՒՐԳԵՆ – Բարի երեկո ձեզ:

ՏԻԳՐԱՆ –Բարև ձեզ…Վարպետ Գուրգե՞ն … Այս ինչ է նշանակում…

ԳՈՒՐԳԵՆ – Ինչ ասեմ…

ԶԱՐՈՒՀԻ – Ինչ ասես… Ասա, ասա, սա նշանակում է, ընկեր Մանվելյան, որ մենք էլ մարդ ենք: Ասա, սա նշանակում է, որ լավությանը պետք է լավությունով պատասխանել: Ահա՝ մենք մեր հնարավորություններից ելնելով մի համեստ նվեր ենք բերել ձեզ: Աշխատող մարդ ենք, ձեռքներս հո քարի տակ չի…

ԱՆԱՀԻՏ - Տիգրա՞ն:

ՏԻԳՐԱՆ – Վարպետ Գուրգենն այն բանվորն է, որի մասին քիչ առաջ պատմում էի: Եղա՞վ վարպետ Գուրգեն:

ԳՈՒՐԳԵՆ – Ինչ ասեմ…

ԶԱՐՈՒՀԻ – Ինչ ասե՞ս: Ասա, որ շատ լավ եղավ, ընկեր Մանվելյան: Ասա, որ մենք հուր հավիտյան պարտական ենք ձեզ: Ասա, որ մեր երեխաների օրհնանքը ձեր ընտանիքի վրա է լինելու: Ասա, որ ձեր լավությունը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ լավություն, տիկին, ես ոչ մի լավություն չեմ արել, օրենքով ձեզ հասնում է, ես էլ ձեզ տալիս եմ…

ԶԱՐՈՒՀԻ- Ասա, այդ նույն օրենքը ընկեր Սարգսյանի ձեռքին չէ՞ր: Ասա, է Գուրգեն, ասա, էնքան տարանք նրանց տուն, որ մեր տունը քանդեցինք: Քույրիկ ջան, ախր նրանց վերմակների բուրդն էլ ես էի լվանում…Ու վերջն ինչ, հեչ:

ԱՆԱՀԻՏ – Ինչ սոսկալի բան է:

ՏԻԳՐԱՆ – Վարպետ Գուրգեն, դուք ինձ ինչի տեղ եք դրել…

ԶԱՐՈՒՀԻ – Ասա՝ բնակբաժնի պետի տեղ…

ՏԻԳՐԱՆ – Ամոթ է, ամոթ, վարպետ Գուրգեն…Անմիջապես վերցրեք ձեր նվերն ու հեռացեք: Բոլորովի չէի սպասում… Գոնե երեխաներից ամաչեիք:

ԶԱՐՈՒՀԻ – Գուրգեն ասա, որ մեզ թաղեք, եթե չվերցնեք…ասա, որ մենք անկեղծ սրտով ենք բերել, որպես հայ մարդ:

(Ներս է մտնում տիկին Հռիփսիմեն)

ՀՌԻՓՍԻՄԵ- Անահիտ ջան, լեղակ չունես մի քիչ տուր… վաղը կառնեմ կտամ.

(Նկատելով Գուրգենին ու Զարուհուն)

Բարև ձեզ… Վայ, էս ինչ շքեղ գորգ է…*(խավը ստուգելով)*

Ապրեք, ապրեք…Ապրեք…լավությանը լավությունով, բա ո՞նց…

(Անհարմար լռություն)

Կներեք ես գնամ ճաշը կրակի վրա է…

ԱՆԱՀԻՏ – Տիկին Հռիփսիմե լեղակը …

ՀՌԻՓՍԻՄԵ- Վայ… տուր Անահիտ ջան, տուր… Խելք է մնացել…

(Գնում է: Նորից լռություն)

ԶԱՐՈՒՀԻ- Գուրգեն… ասա որ…Գուրգեն խոսի … Գուրգեն…

ԳՈՒՐԳԵՆ – Հերիք է: Փակիր աղբյուրի բերանը: Վերջ: Հիմա հասկացա՞ք, ընկեր Մանվելյան: Ոնց որ խոսում է, ճիշտ այդպես էլ երեխաներ է բերում, առանց մտածելու իրար ետևից…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԶԱՐՈՒՀԻ – Լավ էլի, Գուրգեն քո ուզելով չէ՞ր …

ԳՈՒՐԳԵՆ – Վերջ: Ներողություն, ընկեր Մանվելյան…ներողություն, հարս ջան, մենք էլ մեղավոր չենք, մեզ էդպես են սովորեցրել: Ներեցեք մեզ, եթե կարող եք, հանուն սրանց… մարդ ենք, էլի մի բաժակ բան տվեք, խմեմ ձեր կենացը, սրտիս ուզածն ասեմ ու գնամ:

ԱՆԱՀԻՏ- Հիմա, ուրախությամբ…

ՏԻԳՐԱՆ - Այ դա ուրիշ բան…

ԳՈՒՐԳԵՆ – Ձեր կենացը, ընկեր Մանվելյան…

ԶԱՐՈՒՀԻ- Ասա չքնաղ տիկնոջ կենացն էլ:

ԳՈՒՐԳԵՆ- Ձեր կենացը, հարս ջան…Ես գոհ եմ… գոհ եմ, որ ձեր տուն մտա …

ԶԱՐՈՒՀԻ – Ասա, որ ես էլ եմ գոհ…

ԳՈՒՐԳԵՆ- Գոհ եմ, գոհ եմ, որ ձեր տուն մտա ու տեսա, որ աշխարհում ձեզ նման մարդիկ էլ կան: Կներեք…Սիրտս լցված է: Էսքան բան:

ՏԻԳՐԱՆ – Շնորհակալություն, վարպետ Գուրգեն, շնորհակալություն: Ես էլ ձեր կենացն եմ խմում:

ԶԱՐՈՒՀԻ- Ասա՝ անուշ եղավ: Անուշ եղա՞վ, ընկեր Մանվելյան:

ՏԻԳՐԱՆ - *(ծիծաղում է)* եղավ, եղավ…

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Տիգրան Մանվելյանի առանձնասենյակը: Նա խոսում է հեռախոսով)

ՏԻԳՐԱՆ - Ինձ չի հետաքրքրում, թէ ով ինչ է ասել…ուրեմն երբ որոշումը կլինի նոր կխոսենք: *(Դնում է լսափողը: Նորից զանգ)*:

Լսում եմ, այո, այո, ընկեր Դավթյան, արդեն գրեցի՝ «Մինասյան» թող հենց այսօր էլ գա, խնդրեմ, խնդրեմ:

(Անջատում է: Նորից զանգ)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Մանվելյանն է, այո: Ես դրա պատասխանը չեմ կարող տալ: Ընդամենը մեկ ամիս է ինչ ես այստեղ եմ: Այո, ես հենց այնպես խոստանալ չեմ կարող: Բարի: Բերեք ամբողջ գրագրությունը: Կուսումնասիրեմ: Շնորհակալության հարկ չկա, դա իմ պարտականությունն է: *(Ներս է մտել Լևոնը: Տիգրանը ձեռքով հրավիրում է նստել, բայց Լևոնը չի նստում)*: Պայմանավորվեցինք, հաջողություն: *(Լևոնին)*

Ես ձեզ լսում եմ:

ԼԵՎՈՆ- Կներեք ընկեր Սարգսյանը որտեղ է:

ՏԻԳՐԱՆ - Քարտուղարուհին տեղում չէ՞ր:

ԼԵՎՈՆ – Չէ: Առանց նրա չպետք է մտնեի:

ՏԻԳՐԱՆ - Չէ, չէ նշանակություն չունի, լսում եմ:

ԼԵՎՈՆ- Ընկեր Սարգսյանը…

ՏԻԳՐԱՆ - Ընկեր Սարգսյանին տեղափոխել են այլ աշխատանքի: Հիմա նրա փոխարեն ես եմ աշխատում: Իմ ազգանունը Մանվելյան է: Լսում եմ ձեզ…

ԼԵՎՈՆ- Բա ո՞ւր են տարել:

ՏԻԳՐԱՆ – Դա ինչ նշանակություն ունի…Դուք անձամբ նրա՞ հետ գործ ունեք թէ բաժնի հետ:

ԼԵՎՈՆ– Բաժնի հետ:

ՏԻԳՐԱՆ - Դե ուրեմն ինչ տարբերություն, Սարգսյանն է, թէ ես եմ: Լսում եմ:

ԼԵՎՈՆ- Լավ, ցտեսություն…

ՏԻԳՐԱՆ - Սպասեք, ո՞ւր եք գնում:

ԼԵՎՈՆ – Բա որ տարբերություն չկա, մնամ ի՞նչ անեմ, ընկեր Մանվելյան: Հինգ տարի է սպասում էինք, որ նրան հանեն, մի նոր կարգին մարդ բերեն: Հիմա դուք եկել նստել եք նրա աթոռին ու ասում եք, թե ձեր մեջ տարբերություն չկա:

ՏԻԳՐԱՆ - *(Ակամա ծիծաղում է)*Կատակն ընդունված է: Ես ձեզ լսում եմ:

ԼԵՎՈՆ- Լևոն… Լևոն Սիմոնյան… Դուք…

ՏԻԳՐԱՆ - Ես էլ անընդհատ մտածում էի, թե ձեզ որտեղ եմ տեսել: Շատ ուրախ եմ ընկեր Սիմոնյան: Ձեր նվագը միշտ էլ սիրով ենք լսում..:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ – Կներեք կատակիս համար: Ես էլ ձեր մասին եմ լսել և միայն լավն եմ լսել: Համ էլ իսկական մարդը հարյուր կիլոմետրից էլ երևում է, առանց ակնոցի…Իմ գործերը…

ՏԻԳՐԱՆ - *(Փնտրում է գործերի մեջ)* Ձեր գործերը լավ են, ընկեր Սիմոնյան: Բաժինը նախապատրաստել է հարցը: Գործկոմի հենց առաջիկա նիստում քննարկման կդրվի և կարծում եմ կլուծվի դրականորեն:

ԼԵՎՈՆ – Ոնց թե, հենց էնպե՞ս…

ՏԻԳՐԱՆ -Ի՞նչ է նշանակում հենց այնպես:

ԼԵՎՈՆ – Ուզում էի ասել… Ուրիշ ոչ մի թուղթ-մուղթ, բան-ման պետք չի՞…

ՏԻԳՐԱՆ– Ոչ մի բան-ման պետք չի: Ձեզ ի՞նչ պատահեց…

ԼԵՎՈՆ – Ես չեմ դիմանա… Հիմա կհանեմ…

ՏԻԳՐԱՆ - Ինչը՞…

ԼԵՎՈՆ - *(խփում է պայուսակին)* Հիմա, հիմա…*(Դուդուկը հանում է)* Զանգի, Զրանգի… *(Ներս են մտնում Զանգին և Զրանգին: Մեկի ձեռքին դաֆ է մյուսի ձեռքին դուդուկ: Սկսում են նվագել)*

ՏԻԳՐԱՆ – Վերջ տվեք: Ինչ եք անում:

ԼԵՎՈՆ – Բա ասում էիք նվագ սիրող եք…

ՏԻԳՐԱՆ – Սիրում եմ… բայց ոչ այստեղ, հիմնարկում…

ԼԵՎՈՆ – Ուրեմն որտեղ ուզում եք, երբ ուզում եք, քանի հոգով ուզում եք՝ սև մազը վառում եք թե չէ՝ ես իմ խմբով ձեզ մոտ եմ…

Ես ձեր ցավը տանեմ, ընկեր Մանվելյան: Աշխարհի չափ ուրախացրիք, էսօր հո չեմ նվագելու, հո չեմ նվագելու: Ով ձեռքս ընկավ՝ լացացնելու եմ…

ՏԻԳՐԱՆ - *(ծիծաղելով)* Ուրեմն քանի որ դուք ուրախ եք, ուրիշներին լացացնել՞ու եք:

ԼԵՎՈՆ – Իմ ձեռքից էլ էդ է գալիս, ընկեր Մանվելյան: Ցտեսություն:

ՏԻԳՐԱՆ – Դե հաջողություն ձեզ:

ԼԵՎՈՆ – Գնում եմ, մեծ մարդ, գնում եմ… Մենակ թե ուզում եմ մի բան տաք, որ հետս տանեմ:

ՏԻԳՐԱՆ – Ինչ պետք է տամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ – Խոսք մենակ խոսք տվեք, որ մի օր գալու եք իմ նվագը լսելու, ուրիշ ոչ ոք չի լինելու, մենք ու մենք: Ես էդ օրը նվագելու եմ մենակ ձեզ համար:

ՏԻԳՐԱՆ – Շնորհակալություն: Մեծ ուրախությամբ:

ԼԵՎՈՆ – Էդքան բան: Ես ձեր խոսքը հետս տանում եմ: Սրտիս մեջ պահած:

(Դուրս են գալիս)

(Մանվելյանը թղթեր է կարդում: Վերցնում է լսափողը)

ՏԻԳՐԱՆ – Տաթևիկ, ինձ սպասողներ շատ կան, դե լավ թող ներս գա, հետո ինձ ուտելու բան բեր ու սուրճ: Եղա՞վ:

(Ներս է մտնում Մինասյանը: Երեսունն անց տղամարդ է: Բարետես ու կոկիկ է հագնված: Անընդհատ ժպտում է):

ՄԻՆԱՍՅԱՆ – Բարև ձեզ… Մինասյան:

ՏԻԳՐԱՆ – Բարև ձեզ: Ես ձեզ լսում եմ:

ՄԻՆԱՍՅԱՆ – Քեզ հետ խոսել են…

ՏԻԳՐԱՆ - Այո, ընկեր Դավթյան:

ՄԻՆԱՍՅԱՆ - *(Ինչ որ թղթեր է մեկնում)* Այս գործը պետք է արվի:

ՏԻԳՐԱՆ – Եթե անելու բան լինի, անպայման: *(Ծանոթանում է գործին)* բայց ձեր բնակտարածությունը սահմանվածից ավելին է, ինչ խոսք կարող է լինել բարելավման մասին:

ՄԻՆԱՍՅԱՆ – Ինձ բարելավում պետք չէ…Ինձ մեկ սենյականոց առանձին բնակարան է պետք՝ քաղաքի կենտրոնում:

ՏԻԳՐԱՆ – Առավել ևս…

ՄԻՆԱՍՅԱՆ - Հա՞… բայց Դավթյանն ասաց, որ խոսել է ձեզ հետ:

ՏԻԳՐԱՆ – Այո, խոսել է… Բայց կներեք, ոչնչով օգնել չեմ կարող: Օրենքով չի հասնում:

ՄԻՆԱՍՅԱՆ – Գինդ ասա…

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ գին:

ՄԻՆԱՍՅԱՆ – Քո ռիսկի գինը…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - *(Միանգամից չհասկանալով)* Դուք այդ ի՞նչ եք… Դուրս գնացեք: Անմիջապես դուրս գնացեք:

ՄԻՆԱՍՅԱՆ - Ինչի՞… սպիտակ հաց ուտել չես ուզում:

ՏԻԳՐԱՆ – Հեռացեք անմիջապես, թե չէ…

ՄԻՆԱՍՅԱՆ - *(Շարունակում է ժպտալ)* Միլիցիա կկանչե՞ս… ինձ լսիր, ընկեր Մանվելյան, ախր տեսքիցդ երևում է, որ լավ չես ապրում: Քեզ փող է պետք, ինձ բնակարան… դու որ չվերցնես, ուրիշին եմ տալու… Մի քիչ ավելի շատ եմ տալու… Ու էդ ուրիշը քեզ կարգադրելու է, որ էս գործը անես: Ու դու էլ խելոք-խելոք անելու ես: Առանց կոպեկի…Բայց ինչի…ինչի տուժես, հը՞… ինչի՞ ուրիշը վերցնի ու դու անես գործը: Ճիշտ չե՞մ ասում: Բա դու մեղք չես…

ՏԻԳՐԱՆ - *(կատաղությունից դողում է)* Դուրս …

ՄԻՆԱՍՅԱՆ - *(ժպտալով)* Չհասկացաք: *(Մնավելյանը անհանգիստ շարժումներ է անում)* հանգիստ, հանգիստ, այ տղա, դու իսկապես ազնիվ ես…Լրիվ ազնիվ …Լսիր, դու հո ապուշ չես, սոված կմնաս, ախր …Քեզ ո՞վ կպահի էստեղ…Ո՞վ կթողնի: *(Ծիծաղում է)* Գիտե՞ս ծիծաղս ինչի է գալիս: Ախր էս գործը արվելու է, Մանվելյան և հենց դու պիտի անես…Խելոք–խելոք…*(Ծիծաղելով հեռանում է)*

ՏԻԳՐԱՆ – Սրիկա, դեռ կտեսնենք, սրիկա…

(Մանվելյանն ինչ-որ համար է հավաքում, բայց չի խոսում: Կախում է հեռախոսը: Ներս է մտնում Հասմիկը)

ՀԱՍՄԻԿ- Բարև ձեզ:

ՏԻԳՐԱՆ - Բարև ձեզ, ես ձեզ լսում եմ:

ՀԱՍՄԻԿ- Ես ձեզ, այսինքն բնակ բաժնի պետի ընդունարանի մշտական այցելուն եմ:

ՏԻԳՐԱՆ - Բայց ես ձեզ առաջին անգամ եմ տեսնում:

ՀԱՍՄԻԿ- Այո, ընկեր Սարգսյան, ներեցեք ընկեր Մանվելյան, այնքան եմ եկել-գնացել, որ հույսս լրիվ կորցրել էի… Միայն երեկ իմացա, որ այդ Սարգսյան կոչեցյալին հանել են…

ՏԻԳՐԱՆ - Խնդրում եմ ինձ մոտ այդ տոնով չխոսեք: Աշխատանքից ազատված մարդու ետևից խոսելը հեշտ է, բայց հեռու է բարեկրթությունից և արժանապատվությունից: Կներեք…Լսում եմ:

ՀԱՍՄԻԿ- Բարեկրթություն, արժանապատվություն…Սիրուն բառեր են, չէ՞…Ամիսներ շարունակ ձեր ընդունարանում քարշ եկող մարդու մոտ բարեկրթություն կմնա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Ամիսներ շարունակ մուրացկանի նման թույլատվություն եմ խնդրել իմ պետից ու եկել նստել այս անիծյալ ընդունարանում: Այնքան եմ նայել առաստաղին, որ բոլոր սարդոստայները անգիր գիտեմ: Հերթի եմ գրվել: Սպասել, բայց հենց հերթն ինձ է հասել, պարզվել, է որ նա քաղսվետ պիտի գնա կամ էլ մինիստրների խորհուրդ: Հաջորդ օրը նորից եմ եկել, բայց նա ընհանրապես աշխատանքի չի եկել, ինչ-որ տեղ խորհրդակցության է մասնակցում, երրորդ օրն եմ եկել՝ ընդունելություն չունի: Չորրորդ օրը հյուրեր ունի՝ շրջանին է ծանոթացնում: Հինգերորդ օրը բյուրոյի է գնացել: Այսպես օրեր, շաբաթներ, ամիսներ… Ու քիչ էր մնացել ինձ հեռացնեին աշխատանքից ու ճիշտ էլ կանեին: Իսկ դուք ասում եք արժանապատվություն… Ձեր ընդունարաններում սպասող մարդը կարող է արդյոք պահպանել արժանապատվությունը:

ՏԻԳՐԱՆ – Կներեք ես չգիտեի: Բայց ի վերջո կարող էիք դիմում թողնել:

ՀԱՍՄԻԿ- Շատ եմ թողել: Մի անգամ պատասխանել են, թե բավարարել չեն կարող, իսկ հաջող բոլոր բողոքներին՝ նույն պատասխանը, նույն բառերով, նորից մեքենագրել, ուղարկել են: Խնդրեմ, ահա ձեր պատասխանները…

(Տիգրանը վերցնում է դիմումների պատասխանների կապը ու կարդում)

ՏԻԳՐԱՆ - Բնակիչ հասմիկ Թադևոսի Լալայանին… Ի պատասխան ձեր դիմումի…

(Մտքում է կարդում: Հեռախոսը զանգում է)

Լսում եմ, ընկեր Դավթյան բայց ինձ մոտ… Լսում եմ:

(Հասմիկին)

Կներեք նախագահը ինձ իր մոտ է կանչում: Կարծում եմ երկար չի տևի…Մի քանի րոպե սպասեք:

(Գնում է: Հասմիկը բացում է պայուսակը, հանում է հայելին և սկսում է իրեն կարգի բերել: Ներս է մտնում Մանվելյանը: Զգացվում է, որ նա զայրացած է և բորբոքված:)

ՏԻԳՐԱՆ - *(Ուզում է շարունակել կարդալ, սակայն չի կարողանում կենտրոնանալ)* Հասմիկ, խնդրում եմ դուք ծանոթացեք հարցի էությանը… Սրանցից ոչինչ չհասկացա…

ՀԱՍՄԻԿ - Պատմեմ: Ծնվել եմ այս քաղաքում: Մայրս և երկու եղբայրներս ապրում են չորս սենյականոց բնակարանում: Ամուսնացել եմ: Ամուսինս ձեր շրջանի մաքրման գրասենյակում էր աշխատում, վարորդ էր… Տուն չունեինք, վարձով էինք ապրում: Բայց նա հաշվառման մեջ էր: Մեր ամուսնությունից մի տարի էլ չանցավ՝ մահացավ: Պարզվեց, որ սրտի արատ է ունեցել: Երկու ամիս անց իմացա, որ մեզ հանել են հաշվառումից: Այդ ժամանակ էլ գրեցի առաջին դիմումը և ստացա առաջին պատասխանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Հետո՞:

ՀԱՍՄԻԿ – Գրել էին, որ ինձ բնակարան չի հասնում, որովհետև ես գրանցված եմ իմ ծնողների տանը: Իսկ այնտեղ քառակուսի մետրերը բավական են: Եվ որ ես կարող եմ դիմել հիվանդանոց, որտեղ աշխատում եմ, հերթի գրվելու համար:

ՏԻԳՐԱՆ – Իսկ դուք իրոք ձեր ծնողների տանն եք գրանցված:

ՀԱՍՄԻԿ – Ընկեր Մանվելյան, ո՞ր տան տերը կգրանցի իր վարձակալին:

ՏԻԳՐԱՆ – Ձեր ամուսնությունը օրինակա՞ն է:

ՀԱՍՄԻԿ - Իհարկե ես ամուսնուս ազգանունն եմ կրում:

ՏԻԳՐԱՆ - Կներեք իհարկե, երեխա ունե՞ք:

ՀԱՍՄԻԿ – Դա որևէ նշանակություն ունի՞:

ՏԻԳՐԱՆ – Սկզբունքորեն՝ ոչ, բայց…

ՀԱՍՄԻԿ – Այ ինձ էլ հենց այդ «բայցերն» են ասում: Երեխա չունես, ամուսին չունես, նորից հորդ տուն գնա: Չեմ ուզում: Լավ եղբայրներ ունեմ, հարսներս էլ լավն են: Բայց ես չեմ ուզում… Եթե օրենքով հասնում է ինձ, ինչու իմ տունը չունենամ:

ՏԻԳՐԱՆ – Հասկանալի է:

ՀԱՍՄԻԿ – Ընկեր Մանվելյան, ես ուզում եմ իմ անկյունն ունենալ, իմը… հենց հիմա, ներքնահարկում եմ ապրում, եկեք տեսեք, թե ինչ հարմարություններ եմ ստեղծել: Այդ դեռ ներքնահարկում… Իսկ երբ իմ տունը կունենամ… երդվում եմ, կհրավիրեմ, կտեսնեք ու զարմացած կմնաք… Բայց դե ձեզ նման մարդը ինչու պիտի իմ տուն գա…

ՏԻԳՐԱՆ - Ինչո՞ւ եք այդպես կարծում:

ՀԱՍՄԻԿ - Որովհետև ես ամեն ինչ տեսել եմ, գիտեմ…

ՏԻԳՐԱՆ - Բայց դուք շատ ջահել եք, Հասմիկ որտեղի՞ց ձեզ մոտ այդքան… վատատեսություն:

ՀԱՍՄԻԿ – Ջահել եմ… Ջահելությունն էլ անցողական բան է, չէ՞… Միթե ես մինչև կյանքիս վերջը պետք է մենակ մնամ…Միթե ես իրավունք չունեմ նորից երջանիկ լինելու, եթե դուք կարողանաք օգնել ինձ, որ ես իմ տունն ունենամ…

ՏԻԳՐԱՆ – Հանգստացեք Հասմիկ, ես հենց այնպես, բանավոր ոչինչ ասել չեմ կարող: Դիմումը տվեք քարտուղարուհուն և գնացեք: Ես անձամբ կզբաղվեմ ձեր հարցով: Եթե օրենքով հասնում է, կստանաք: Իսկ եթե չի հասնում…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՍՄԻԿ- Միայն թե զբաղվեք, խնդրում եմ, միայն թե զբաղվեք… Մեկ էլ երբ գամ, ընկեր Մանվելյան:

ՏԻԳՐԱՆ – Աշխատանքից կտրվելու հարկ չկա: Դիմումի տակ գրեք ձեր հեռախոսի համարը: Հեռախոս ունե՞ք:

(Հասմիկը գլխով է անում)

Շատ բարի: Ինչպիսին էլ լինի պատասխանը, ես ձեզ զանգ կտամ… Իսկ հետո պաշտոնապես կուղարկենք:

ՀԱՍՄԻԿ – Ընկեր Մանվելյան… ու չեք նեղանա, որ ասեմ…

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ…

ՀԱՍՄԻԿ – Այնպիսի բան եք ասում, որ հավատալս չի գալիս:

ՏԻԳՐԱՆ – Իզուր, հավատացեք, եթե ասում եմ, ուրեմն զանգ կտամ:

ՀԱՍՄԻԿ – Ինչ լավ մարդ եք, ընկեր Մանվելյան *(հեռանում է)*

(Հարբեցողների խումբը երգում է. «Ալա-բա-լա-նիցա»:)

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Տիգրան Մանվելյանի տան ճաշասենյակը: Անահիտը անհանգիստ ժամացույցին է նայում: Ներս է մտնում, տիկին Հռիփսիմեն)

ՀՌԻՓՍԻՄԵ – Բարև, Անահիտ ջան…

ԱՆԱՀԻՏ – Բարի երեկո, տիկին Հռիփսիմե:

ՀՌԻՓՍԻՄԵ – Անահիտ ջան, կարմիր բիբար չունե՞ս, քյուֆթա եմ գցել, կարմիր բիբար չկա:

ԱՆԱՀԻՏ- Հիմա կբերեմ: *(դուրս է գալիս)*

ՀՌԻՓՍԻՄԵ- *(Շուրջն է նայում: Դիմում է ներս մտնող Անահիտին)*

Էդքանն ինչու ես բերել, հոգի ջան: Ինձ մի քիչ է պետք:

ԱՆԱՀԻՏ- Ոչինչ, ոչինչ, վերցրեք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀՌԻՓՍԻՄԵ- Էս ոչինչ չի փոխվել:

ԱՆԱՀԻՏ - Ինչը՞ պետք փոխվեր:

ՀՌԻՓՍԻՄԵ – Բա նոր կահույք չե՞ք առնում: Երրորդ հարկի Ասլամազովները մի այնպիսի կահույք բերեցին, այնպիսի կահույք, հայելի պետք չէ պատկերդ երևում է մեջը:

ԱՆԱՀԻՏ – Մերն էլ վատը չէ:

ՀՌԻՓՍԻՄԵ – Հիմա ավելի լավերը կան:

ԱՆԱՀԻՏ – Լավերն էլ լավ գին ունեն:

ՀՌԻՓՍԻՄԵ – Անահիտ ջան, մենք հին հարևաններ ենք, ձեր ուրախությունը միշտ էլ իմ ուրախությունն է եղել: Կարծում ես սիրտս չեր ցավում, երբ տեսնում էի, որ ծայրը ծայրին չեք հասցնում: Որ Տիգրանը տարիներ շարունակ նույն կոստյումն էր հագնում, իսկ դու միևնույն շորը: Հիմար մարդիկ էլ ասում էին ինչ անճաշակ են Մանվելյանները: Միշտ նույն շորն են հագնում: Իսկ երբ ասում էի՝ ճաշակ շատ լավ էլ ունեն, փող չունեն փող…

ԱՆԱՀԻՏ – Տիկին Հռիփսիմե, հիմա ավելի լավ կլինի արդեն, Տիգրանը բարձր աշխատավարձ է ստանում:

ՀՌԻՓՍԻՄԵ – Բա չե՞մ տեսնում, բա չե՞մ ուրախանում: Ումից է պակաս մեր Տիգրանը: «Ինտուրիստում» մի ծանոթ ունեմ: երեկ ասում էր՝ ինչ տղամարդ է ձեր հարևան Մանվելյանը, երկու շիշ կոնյակ խմում վրան էլ երկու շիշ շամպայն ու իսկի պետքն էլ չի…ոչ օրորվում է, ոչ էլ մի ավելորդ խոսք ասում:

ԱՆԱՀԻՏ – Տիգրանը… «Ինտուրիստում»:

ՀՌԻՓՍԻՄԵ – Հա, հա: Ծանոթս ասում է՝ հաճախ է մեզ մոտ լինում: Ժողովուրդը շատ է հարգում նրան, ուրիշ սեղաններից շշեր են, որ նվիրում են նրան… Շատ ուրախացավ, որ էդպես հարգանքով է շրջապատված մեր Տիգրանը:

ԱՆԱՀԻՏ – Տիկին Հռիփսիմե, պատահաբար հո երազ չե՞ք տեսել…

ՀՌԻՓՍԻՄԵ – Վայ, չէ, Անահիտ ջան աշխատում եմ չտեսնել: Հիմա երազի համար աշխատանքից հեռացնում են:

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ, ի՞նչ…

ՀՌԻՓՍԻՄԵ – Հենց մեր խանութի գիշերային պահակ Վարոսին: Առավոտը, որ վարիչը գալիս է խանութը բացելու, Վարոսն ասում է՝ ընկեր Թևանյան էսօր խանութից դուրս չգաք, գիշերը ձեզ վրա փիս երազ եմ տեսել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԱՀԻՏ - Հետո՞:

ՀՌԻՓՍԻՄԵ - Էլ ինչ հետո՝ Թևանյանը հրաման է տալիս ու հեռացնում Վարոսին՝ պոստում քնելու համար:

ԱՆԱՀԻՏ - *(ծիծաղում է ակամա)* Անեկդոտ է....

ՀՌԻՓՍԻՄԵ - Ասենք թե անեկդոտ է, բա Վարոսն ո՞ւր է: Վայ, քյուֆթաս...

(Դուրս է վազում)

(Ներս է մտնում Տիգրանը՝ բարձր տրամադրությամբ)

ՏԻԳՐԱՆ - *(Երգում է)* Ուր գնաց, զուր գնաց.... Շան որդին վարպետ է, էլի…ուր գնաց, զուր գնաց… Անահիտ, ուր գնաց, զուր գնաց… Վաչե, Գոհարիկ… էս որտեղ են չքվել... էդ ոնց էր երգում, լացացնում էր... Որտեղ ընկել եմ, մամա ջան, թող էնտեղ էլ մնամ...

ԱՆԱՀԻՏ - Տիգրա՞ն...

ՏԻԳՐԱՆ - Չխոսես, անուշ ջան… Որտեղ ընկել եմ, Անո ջան, թող էնտեղ էլ մնամ…

ԱՆԱՀԻՏ - *(Ծիծաղում է)* Ինչ չէինք տեսել, տեսանք… Հարբա՞ծ ես, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - *(Աշխատում է լրջանալ)*

Չէ, Անահիտ ջան, հարբած չեմ: Ինձ հարբեցնելն էդքան հեշտ է, Անահիտ ջան… Ուղղակի տրամադրությունս բարձր է... Շատ բարձր է...

ԱՆԱՀԻՏ - Դե ասա տեսնեմ, թե ինչ է եղել, որ իմ տրամադրությունն էլ բարձրանա:

ՏԻԳՐԱՆ - Ասեմ, Անահիտ ջան, տուն էի զալիս, մեկ էլ ո՞վ հանդիպի, մեր դասարանի չամիչ Պետիկը... դասերից հետո փողոցում չամիչ էր ծախում... Հիմա կոոպառի կառավարիչն է: Հարյուր տարի չէի տեսել, կպավ, թե գնանք մի տեղ նստենք, ու հիշենք մեր մանկությունը… Հրաժարվեցի, նա էլ թե՝ մեծամտացել ես, մանկության ընկերներիդ հաշվի չես առնում... մի խոսքով…

ԱՆԱՀԻՏ - Իսկ մինչև հիմա որտե՞ղ էր էդ չամիչ Պետիկը… տեղդ չզիտե՞ր...

ՏԻԳՐԱՆ - Ոչ մի բան չուզեց, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ - Վերջը կերևա...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Դու էդ ի՞նչ ես ակնարկում: Որ ես հանուն խմիչքի... կամ հանուն որևէ բանի...Դու ինձ չե՞ս ճանաչում: Մի անգամ էլ եմ ասում ու ասում եմ վերջին անգամ, ես օրենքի ոչ մի խախտում թույլ չեմ տալու, Անահիտ, հասկացար....

ԱՆԱՀԻՏ - Իսկ այդ ո՞ւր էիր ընկել, որ ուզում էիր ընկած տեղդ էլ մնալ...

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ... ես... Ախ, հա երգ է, երգ... Դու գիտե՞ս ում հետ եմ ծանոթացել: Դուդուկահար Լևոն Սիմոնյանի հետ... էդ ոնց էր երգում, լացացնում էր, լացացնում…

ԱՆԱՀԻՏ - Տիգրան սիրտս գուշակում է, որ դու առանց երգի էլ լաց ես լինելու:

ՏԻԳՐԱՆ - Ինչի՞… Այ աղջի, մի տիկին Հռիփսիմե էլ դու դարձար գլխիս... ի՞նչ է պատահել:

ԱՆԱՀԻՏ – Դու ամեն օր խմում ես Տիգրան . . .

ՏԻԳՐԱՆ - Հա, բայց հարբո՞ւմ եմ: Հիմա ես հարբա՞ծ եմ: Վա՞տ է, որ բարձր տրամադրությամբ եմ տուն գալիս, որ ուզում եմ երգել՝ ուր գնաց, զուր գնաց... և եթե տանջվում եմ, միայն նրա համար, որ դու և երեխաներս կողքիս չեք լինում: Վաչե, Գոհարիկ... Ո՞ւր են, հը՞… երեխաներս ո՞ւր են…

ԱՆԱՀԻՏ - Կինո են գնացել, ուր որ է, կգան:

ՏԻԳՐԱՆ - Սրանից հետո մենք միշտ միասին կլինենք, Անահիտ ջան, և որպես սկիզբ՝ վաղը շաբաթ է, չէ՞... Բոլորիդ հրավիրում եմ ռեստորան, «Ինտուրիստ»…

ԱՆԱՀԻՏ - Ռեստորա՞ն… էդ ինչո՞վ, սիրելի ամուսին, աշխատավարձիդ տարբերությունը կբավականացնի՞...

ՏԻԳՐԱՆ - Մի բան էլ կավելանա, Անահիտ ջան, պարզվում է, որ ռեստորանային գներն այնքան էլ թանկ չեն, ինչքան մատուցողներն են թանկացնում… Հավատա, սիրելիս, երբ ճանաչում են, հարգում կամ վախենում… այնքան փոքր է լինում գումարը, որ քեզ թվում է, թե խաբում են... գնում ենք:

(Ներս են մտնում Վաչեն ու Գոհարը)

ՏԻԳՐԱՆ - Եկա՞ք... ես ձեր ցավը տանեմ... էս Վաչես է... էս Գոհարիկս է...

(Մոտենում է կնոջը) էս …

ՎԱՉԵ - Պապ, խմած ես…

ՏԻԳՐԱՆ - Չէ Վաչե ջան, տրամադրությունս է բարձր...

ԱՆԱՀԻՏ - Հայրիկը վաղը մեզ հրավիրում է ռեստորան... Ինտուրիստ…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՉԵ - ճի՞շտ, պապ, ուխ, քյաբաբ կլինի...

ՏԻԳՐԱՆ - Քյաբաբ էլ, խորոված էլ, ինչ ուզեք, ինչքան ուզեք...

ԳՈՀԱՐ - Մենակ թե ինձ ուտել չստիպեք… ես պարելու եմ և կոկտեյլ եմ խմելու….

ՏԻԳՐԱՆ - Ուտել ինչի չես ուզում, Գոհար ջան….

ԳՈՀԱՐ - Լավ էլի, պապ., առանց այն էլ տես ինչ եմ դարձել:

ՏԻԳՐԱՆ - Ինչ ես դարձել... ցամաք ձորի աղվես:

(Տիգրանը սկսում է ծամածռություններ անել, երեխաները քրքջում են:)

ԱՆԱՀԻՏ - Տիգրան.... հերիք է, քեզ ի՞նչ է պատահել, առաջ դու երեխաների մոտ *(Տիգրանը շարունակում է ծամածռություններ անել)* Վայ, ձեռքից գնում ես, Տիգրան…

ՏԻԳՐԱՆ - Ուր եմ գնում... Ձեր ձեռքից պրծնե՞լ կլինի...

ԲՈԼՈՐԸ - Հայրիկը ձեռքից գնում է... Հայրիկը ձեռքից գնում է...

(Գրկում են իրար, գլորվում հատակին, ընդհանուր ուրախություն)

ԱՆԱՀԻՏ - Բաց թողեք, հանկարծ մեկը ներս կմտնի, ինչ կասի, գժեր...

ՏԻԳՐԱՆ - Թող մտնեն…

ԱՆԱՀԻՏ - Հերիք է, շունչս կտրվեց, վեր կացեք... վեր կացեք, գնանք ձեզ թեյ տամ:

(Ներս է մտնում տիկին Հռիփսիմեն)

ՀՌԻՓՍԻՄԵ -Վայ, Անահիտ ջան, քառասուն համարի թել չունես.

(Անահիտը գնում է թելը բերելու)

Դե շեն ու շնորհքով ընտանիքները էսպես կլինեն, էլի….Տիգրան ջան, էն օրը մտա չորրորդ հարկի Ռաֆիկենց տուն... ինչ տեսնեմ...

ԱՆԱՀԻՏ - *(կոճը տալով)* Համեցեք, տիկին Հռիփսիմե:

ՀՌԻՓՍԻՄԵ - *(Դժգոհում է, որ ընդհատեցին պատմությունը)* Շնորհակալ եմ... Տուր, տուր, Անահիտ ջան… վաղը կառնեմ, կտամ... *(Գնում է)*

ԱՆԱՀԻՏ - Վաղը ողջ շենքը կխոսի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ինչի վաղը, թող հենց էս օրվանից խոսի *(Երգում է)* Ուր գնաց, զուր գնաց...

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Հասմիկի նոր բնակարանը: Շատ հարմարավետ փոքրիկ սենյակ է: Մեղմ, հաճելի երաժշտություն: Շարժասայլակի վրա ուտելիքով և խմիչքով սկուտեղ է դրված)

ՏԻԳՐԱՆ - *(Զգվում է)* Ժամը քանիսն է... Ոնց թե, երեք ժամ քնել եմ: *(Արագ-արագ հագնվում է)* Էս չեղավ, ես գնացի, Հասմիկ ջան:

ՀԱՍՄԻԿ - Մինչև չընթրենք, չեմ թողնի….

ՏԻԳՐԱՆ - Ուշանում եմ, ջանս...

ՀԱՍՄԻԿ - Ինչի՞ց…

ՏԻԳՐԱՆ - Տանն ինձ կսպասեն...

ՀԱՍՄԻԿ - Ոչինչ, թող մի քիչ էլ սպասեն… Ես քեզ ամբողջ կյանքում եմ սպասել …

ՏԻԳՐԱՆ - Հասմիկ….

ՀԱՍՄԻԿ- Մի քիչ էլ, այ այսքան, մի քիչ էլ մնա, Տիգրան ջան: Այսօր ինձ մենակ մի թող, լավ: Մնա... մնա ու խմիր իմ կենացը, որովհետև վաղը, որ քո այցելության օրը չէ, լրանում է իմ ծննդյան 25 տարին.

ՏԻԳՐԱՆ - Այդքան ջահել ե՞ս...

ՀԱՍՄԻԿ - Հա, եթե 25-ը ջահել է համարվում:

ՏԻԳՐԱՆ - Քո կենացը, Հասմիկ ջան, երջանիկ լինես:

ՀԱՍՄԻԿ - Մի ասա, մի ասա...

ՏԻԳՐԱՆ - Երջանիկ լինես, առողջ լինես ու թող կատարվեն քո բոլոր երազները, Հասմիկ ջան:

ՀԱՍՄԻԿ - Մի ասա, մի ասա, դու քո դեմ ես խոսում:

ՏԻԳՐԱՆ - Ինչո՞ւ...

ՀԱՍՄԻԿ - Որովհետև ես երջանիկ միայն քեզ հետ կարող եմ լինել: Որովհետև իմ բոլոր երազները քեզ հետ են կապված:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ես քեզ շատ եմ սիրում, Հասմիկ: Այնքան, որքան կյանքում ոչ ոքի չեմ սիրել... *(Խմում է)*

ՀԱՍՄԻԿ - Իսկ Անահիտին:

ՏԻԳՐԱՆ - Անահիտը ինչ կապ ունի... Անահիտը իմ երեխաների մայրն է:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ես ո՞վ եմ:

ՏԻԳՐԱՆ –Դու իմ կյանքն ես, դու իմ հոգին ես, իմ արևն ես, իմ հրաշք հավքն ես…

ՀԱՍՄԻԿ - Ասա, ասա...

ՏԻԳՐԱՆ - Դու իմ միակ սերն ես… առաջինն ու վերջինը: Օրհնված լինի այն օրը, երբ դու իմ առանձնասենյակը մտար, և...

ՀԱՍՄԻԿ - *(ծիծաղում է)* Կեղծավոր… բայց մեկ է, ես սիրում եմ քեզ, Տիգրան, քո ամեն ինչը, քո ամեն մի շարժումը, նույնիսկ այն, որ խմելու ժամանակ ճկույթդ մի կողմ ես տանում…

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ եմ անում... Ոնց եմ մի կողմ տանում...

ՀԱՍՄԻԿ - Խմիր ու տես...

ՏԻԳՐԱՆ - *(Խմում է)* Հա էլի... Ոնց էլ նկատել ես...

ՀԱՍՄԻԿ - Սիրում եմ… ծիծաղդ... նույնիսկ սպիտակող մազերդ....

ՏԻԳՐԱՆ - Հասմիկ, էդ մեկը չեղավ…

ՀԱՍՄԻԿ - Սիրում եմ... Եկ այս մի բաժակն էլ միասին խմենք….ու քանի ապրում ենք, սիրենք իրար...

(Խմում են համբուրվում)

ՏԻԳՐԱՆ - Որ ասացիր՝ քանի ապրում ենք, սիրենք իրար, Լևոնին հիշեցի:

ՀԱՍՄԻԿ - Լևոնն ո՞վ է...

ՏԻԳՐԱՆ - Դուդուկահար Լևոն Սիմոնյան: Երգի խոսքերը փոխել է ու հիմա այսպես է երգում. «Քանի ջահել ենք ուրիշին սիրենք, հենց որ մեծանանք, մեր կնկան սիրենք»…

ՀԱՍՄԻԿ - *(ծիծաղում է)* Սրամիտ է:

(Դռան զանգ)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ կլինի...

ՀԱՍՄԻԿ - Չգիտեմ

ՏԻԳՐԱՆ - Դուռը չբացես:

ՀԱՍՄԻԿ - Լույսը վառվում է, չբացեմ ինչ անեմ...

ՏԻԳՐԱՆ - Գուցե եղբայրներդ լինեն:

ՀԱՍՄԻԿ - Վախենո՞ւմ ես...

ՏԻԳՐԱՆ - Վախենալս ո՞րն է... ամոթ է, էլի... ի՞նչ կասեն...

(նորից դռան զանգ)

ՀԱՍՄԻԿ - Ես իմ եղբայրներին դաստիարակել եմ: Մինչև հեռախոսով զանգ չտան, մինչև ես թույլ չտամ: չեն գա: Իսկ ուրիշ մարդ չի կարող լինել, ընկեր Մանվելյան, որովհետև, քեզանից բացի ես ոչ ոք չունեմ:

(Նորից դռան զանգ)

ՏԻԳՐԱՆ - Բա դա ո՞վ է, որ մարդ չէ, հրեշտակ է...

ՀԱՍՄԻԿ - Հիմա կիմանամ... *(Գնում է վերադառնում է)* Հարևանուհին էր, հանգստացիր պահածոներ փակելու գործիքն էր ուզում:

ՏԻԳՐԱՆ - Դա էլ ձեր տիկին Հռիփսիմեն է՞...

ՀԱՍՄԻԿ - Բայց դու շատ վախեցար: Գույնդ գցել ես... մի բաժակ խմիր, թող երեսիդ գույն գա:

ՏԻԳՐԱՆ - Չէ, չէ, մի բաժակ էլ որ խմեցի կհարբեմ:

ՀԱՍՄԻԿ - Դու... դու հարբես... Աչքովս էլ տեսնեմ չեմ հավատա... Որ տեսնում եմ ինչ հաճույքով ու թեթևությամբ ես խմում... Ախր դեմքդ բոլորովին չի աղավաղվում… ուրիշներին տեսնում եմ էլի, խմելիս այնպես են ծռմռում բերանները, այնպես են խառնում մռութները, որ մարդ զզվում է: Իսկ որ դու խմում ես...

(Տիգրանը ծիծաղում է)

Ինչո՞ւ ես ծիծաղում:

ՏԻԳՐԱՆ - Լևոնին հիշեցի, -ասում է, –ընկեր Մանվելյան էնպես հաճույքով ես խմում, որ քիչ է մնում մարդ գնա տուն ու տեղը ծախի ու նստի խմի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՍՄԻԿ - ճիշտ է ասում:

ՏԻԳՐԱՆ - Կենացդ… *(խմում է)* Ես երջանիկ եմ, Հասմիկ... Ես հիմա եմ հասկանում, թե ինչ բան է երջանկությունը:

ՀԱՍՄԻԿ - Բա ինչո՞ւ ես ժամացույցին նայում...

ՏԻԳՐԱՆ - Տո չեմ էլ նայում... ժամացույցի հերն էլ անիծած, բոլորի հերն էլ անիծած... Մնում եմ... շիշ բեր…

ՀԱՍՄԻԿ - Ես քեզ ոչ ոքի չեմ տա....*(խմում են)*

ՏԻԳՐԱՆ - Ոնց որ ջուր լինի:

ՀԱՍՄԻԿ - Դու հենց ջուր էլ խմում ես, օղին սա է, խորամանկ:

ՏԻԳՐԱՆ - ճի՞շտ... հա, էլի... ախր ուշքս ու միտքս... լույսը հանգցրու …

(Լույսը մարում է):

ՀԱՍՄԻԿ - Բա վաղը տանը ի՞նչ ես ասելու, մի բան մտածել ես:

ՏԻԳՐԱՆ - Մինչև առավոտ մի հեքիաթ կհնարեմ: Դու ինձ Ղազարոս Աղայան էլ դարձրիր...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Տիգրան Մանվելյանի առանձնասենյակը: Տիգրանը մոտենում է բեմեզրին)

ՏԻԳՐԱՆ - Մի տարօրինակ ու զարհուրելի բան է կատարվում: Մեզ մոտ չգիտես ինչպես, չգիտես ինչու ամեն ինչ խմելու հետ է առնչվում: Որպեսզի ծանոթանաս մեկի հետ՝ մեջտեղում խմիչք պետք է լինի: Որպեսզի հաշտվես՝ նույնը:

Հյուր ես գնում՝ պարտավոր ես խմել: Հյուր ես ընդունում, ժլատ կհամարվես, եթե շիշ չդնես սեղանին: Որպեսզի մխիթարեն քեզ՝ հարբեցնում են: Որպեսզի ուրախացնեն՝ հարբեցնում են: Որպես շնորհակալության նշան՝ խմիչք են հյուրասիրում: Մարդիկ մոռացել են հենց այնպես, մի բաժակ թեյի շուրջն հավաքվելն ու զրուցելը, լոտո կամ դոմինո խաղալը: Ամենուրեք սեղանին իշխում է խմիչքը...

Օֆ, պայթում է գլուխս... ախր չպետք է խառնեի, էլի... Ամեն անգամ ասում եմ ու էլի խառնում եմ… հատկապես գարեջուրը... ախ.. եկեք, է, բոլորն ասում են՝ ցավդ տանեմ… ցավդ տանեմ… բա հիմա որտե՞ղ եք, եկեք տարեք, էլի., .

(Վերցնում է լսափողը)

Տաթևիկ ջան կես ժամ փրկիր ինձ, շատ եմ զբաղված…

(Լսափողը ցած է դնում)

Ախ, գլուխս… իսկ եթե փորձեմ... ասում են շան կծածը… Մինչև երկուսը դեռ ահագին կա... *(Հեռախոսի զանգ)*

Լևոն Սիմոնյանը, թող ներս գա....

(ներս է մտնում Լևոնը, ձեռքին դիպլոմատ)

ԼԵՎՈՆ - Բարև, ախպեր ջան: Ոչ զործ ունեմ, ոչ ցավ ունեմ, ոչ հարց: Ընդամենը մի փոքրիկ խնդրանք:

ՏԻԳՐԱՆ - Լսում եմ, Լևոն ջան…

ԼԵՎՈՆ - Ուզում եմ միասին նախաճաշենք… ուղիղ ժամը մեկն է:

ՏԻԳՐԱՆ - Հիմա Տաթևիկին խնդրեմ, թող մի բան բերի... տեսնենք բուֆետում ինչ կա:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ - Դու Տաթևիկին խնդրի, որ մեզ խանգարող չլինի...

ՏԻԳՐԱՆ - *(Ծիծաղում է)* Տաթևիկ, չէ, ոչինչ չեմ ուզում: Դուռը փակիր ու գնա ընդմիջման:

ԼԵՎՈՆ– Իմաստուն ախպեր… խնդրեմ… Սիմ-սիմ... Տղերք...

(Ներս են մտնում նրա ընկերները, բացում դիպլոմատները)

ՏԻԳՐԱՆ - Պահ-պահ.... պահ....քյուֆթա, խորոված, իշխան, իսկական է... հորած պանիր, սոխ, պոմիդոր... վախ, վախ, կծու բիբար... զեյթուն …

ԼԵՎՈՆ - Երեք օր է հարսանիք էի նվագում, իմ ախպեր: Գիտես ում տղան էր ում աղջկա հետ ամուսնանում: *(փսփսում է ականջին)* Կապերն ամրացնում են: Բա ոնց: Քաղաքական-գաղափարական: Հո հարսանիք չէր, հին թագավորների պես՝ երեք օր ու գիշեր: Ինչ սեղան էր, ինչ սեղան, ես, որ ամբողջ կյանքում սեղաններ եմ տեսել, զարմացել էի... Խիղճս տանջում էր, որ ես ուտում, խմում եմ ու դու կողքիս չես., Դիպլոմատները տվեցի, ասացի՝ լցրեք: Էս էլ իմ կողմից. «Նաիրի»

ՏԻԳՐԱՆ - Չէ, չէ.... առանց այդ էլ... մի բաժակ, որ խմեմ, գլուխս կպտտվի:

ԼԵՎՈՆ - Ճիշտ է: *(Լցնում է բաժակները)* Մի բաժակից հետո ո՞ւմ գլուխը չի պտտվի: Բայց պտտվում է մի կողմի վրա: Հետո երկրորդն ես խմում՝ պտտվում է մյուս կողմի վրա: Իսկ հետո երրորդն ես խմում՝ գլուխդ ճիշտ մեջտեղում կանգնում է... դե, դե, ըհը: Քեզ տեսնեմ, համարձակ...

Տիգրան - Լևոն... էսպես որ գնա, հարբեցող կդառնամ:

ԼԵՎՈՆ - *(Լցնում է բաժակները)* Դո՞ւ... մեզանից հարբեցող դուրս չի գա, Տիգրան ջան: Մենք ուրիշ ենք: Մի կտոր բան կեր: Ապրես: Մարդիկ կան, որ մենակ խմում են, էդ վատ է: Մարդիկ էլ կան, որ մենակ ուտում են, էդ ավելի վատ է: Իսկ մենք, իմ համով ախպեր, ուտող խմողներ ենք... չեղավ, բաժակը բարձրացրած ձեռքը չեն իջեցնի... *(Զանգին Զրանգին երգում են)* բարձրացնում ենք բաժակները... Մի քիչ էլ... գնաց… *(Խմում են)* բարի ճանապարհ…

ՏԻԳՐԱՆ - Սիրտս...

ԼԵՎՈՆ - Սրտիդ ի՞նչ է եղել, սրտիդ մեռնեմ...

ՏԻԳՐԱՆ - Ցավում է.... ոնց որ....

ԼԵՎՈՆ - Միակ դեղը էս է, հավատա իմ փորձին... *(Երրորդ բաժակն է լցնում)*

ՏԻԳՐԱՆ - Չէ, չէ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ - Ուրեմն սրտիդ համար չե՞ս խմում...

ՏԻԳՐԱՆ - Հա, Լևոն...

ԼԵՎՈՆ - Իսկ եթե, աստված չանի, դու մեռնես, լավ իմաստով եմ ասում ու սիրտդ էլ առողջ մնա, ու՞մ է պետք …

ՏԻԳՐԱՆ - Չհասկացա...

ԼԵՎՈՆ - Իմ ազիզ ախպեր, մարդիկ հո մենակ սրտից չեն մեռնում... Ասենք թե, աստված չանի, վթարի տակ ընկար, լավ իմաստով եմ ասում, վթարի տակ ընկար, մեռար, իսկ սիրտդ էլ առողջ մի քանի րոպե տկտկացնում է: Մեջն ի՞նչ. ..

ՏԻԳՐԱՆ - Վայ Լևոն, վայ... Ուրեմն եթե դու մեռնես ու սիրտդ էլ առողջ մնա, ում է պետք... հանճարեղ էր... աշխարհի հերն էլ անիծած, սրտի հերն էլ... *(Խմում է)*

ԼԵՎՈՆ - Անուշ... դե մի բան կեր: Խմող մարդը մեկ մեկ էլ պիտի ուտի... Ապրես … մի-մի բաժակ էլ ...

ՏԻԳՐԱՆ - Չէ, Լևոն ջան, վերջ: Հերիք է... երեքը լրացավ...

ԼԵՎՈՆ - Բա էս կիսատ շիշն ի՞նչ անենք…

ՏԻԳՐԱՆ - Ինչ անենք. .. Կպահենք արտասահմանցի հյուրերի համար: *(շիշը պահում է)* Սիրտս էլ չի ցավում, Լևոն:

ԼԵՎՈՆ - Բա որ ասում էի, իմ ախպեր...

ՏԻԳՐԱՆ - Ախր երեկ չափը անցկացրի... Գիշերն էլ տանը չեմ եղել, չգիտեմ ինչ երեսով տուն գնամ:

ԼԵՎՈՆ - Հարսը խռովել է...

ՏԻԳՐԱՆ - Դրա նման մի բան....ամաչում եմ...

ԼԵՎՈՆ - Իսկ հարսը նվազ սիրում է... մերը, հայկական...

ՏԻԳՐԱՆ - Շատ:

ԼԵՎՈՆ - Հեչ չվախենաս, ազիզ ախպեր. էղ թող ինձ վրա, որ իմանաս ինչ ընտանիքներ եմ հաշտեցրել:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ ես մտադիր անել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ - Դե ես թռա, ընդմիջման ժամն ավարտված է:

(ծնկում է գետնին, գլուխը մի քանի անգամ խփում հատակին: Զանգին և Զրանգին նույն են անում)

ՏԻԳՐԱՆ - Էդ ի՞նչ եք անում: *(Զարմացած է)*

ԼԵՎՈՆ - Ճապոնիայում էսպես են ցտեսություն ասում... սովորում ենք, շուտով գնալու ենք... *(Դուրս են գալիս)*

ՏԻԳՐԱՆ - *(Ծիծաղում է)* Վայ, Լևոն, Լևոն... էն ոնց ասաց, որ դու մեռնես ու սիրտդ առողջ մնա, ում է պետք: Իրոք հանճարեղ է…

(Հեռախոսի զանգ: վերցնում է լսափողը)

Տաթևիկ, ո՞վ... Այսօր բարեկամների ընդունելության օր է, ուրիշ սպասող չկա՞: Լավ, թող ներս գա:

(Ներս է մտնում Ազատը: Անհարմար լռություն)

ՏԻԳՐԱՆ - *(Փորձում է կատակել)* Բարև, բարի լույս չկա, իմ ախպեր, *(Ազատը լուռ է)* Ազատ… ի՞նչ է պատահել:

ԱԶԱՏ - Ի՞նձ ես հարցնում:

ՏԻԳՐԱՆ - Բա ո՞ւմ հարցնեմ:

ԱԶԱՏ - Քեզ հարցրու...

ՏԻԳՐԱՆ - Ազատ, հանելուկներով մի խոսի, հա... Պարզ խոսիր... պարզ եղեք.. Թե տանդ համար ես եկել, ասա...

ԱԶԱՏ - *(խոսքը կտրելով)* Գիշերվա ժամը չորսին Անահիտը Գոհարիկի հետ մեր տուն եկավ... Քեզ էին փնտրում... Անահիտը… Դու գիտե՞ս չէ... թե նա ինչքան հպարտ և համբերատար մարդ է: Երեխայի պես լաց էր լինում:

ՏԻԳՐԱՆ - Պահ, պահ, պահ, աշխարհը քանդվեց… Մի գիշեր տուն չեմ եկել:

(Ելքը գտնելով) Հյուրեր ունեի Մադագասկարից. Անտանանարիվուի հետ եղբայր քաղաքներ ենք, չէ՞... Սևան էինք տարել:

ԱԶԱՏ - Ճիշտ չես ասում, Տիգրան … Դու էլ գիտես, որ հարցը մի գիշերվա մեջ չէ… Դու արդեն աշխաանքի տեղո՞ւմ էլ ես հարբում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - *(Ընդհատելով)* Ասացի հյուրեր ունեինք, չէ....Անտանա...

ԱԶԱՏ - Տեսա քո հյուրերին.... Տիգրան, մեղքը մեկ, արդարանալու պատճառները հազար ու մեկ… Եղավ: Բա դու էդ մարդն ես:

ՏԻԳՐԱՆ - *(Զայրանում)* Չեղավ, հա չեղավ... Ոչ մի հյուր էլ չկար: Մարդ ենք, տղամարդ ենք… Հազար ու մի հարց կա....*(Ուզում է խոսքի ընթացքը փոխել)* Հա, տանդ հարցը ի՞նչ եղավ, չի՞ լուծվում: Ես քեզ մոտ խոսեցի, չէ...

ԱԶԱՏ - Դու քո տան մասին մտածիր, Տիգրան... Անահիտն ասաց. Ազատ, մեր տունը քանդվում է, չգիտեմ, չեմ կարողանում հասկանալ, թե Տիգրանին ինչ է եղել, օր-օրի փոխվում*:*

ՏԻԳՐԱՆ - Անահիտը... նրա համար ինչ կա: Անահիտի միակ պրոբլեմն էն է, որ ես փեշը բռնեմ, նստեմ տանը: Նա գիտի՞, թե ես ինչով եմ զբաղված, ինչ եմ անում: Կամ ու, դու գիտե՞ս: Կարծում եք, թե միայն հանդիսավոր պայմաններում բնակարաններ եմ բաժանում ու ժպտում: Գիտե՞ս քանի տեսակ մարդ է մտնում իմ առանձնասենյակը, քանի տեսակ զանգեր են լինում... Անահիտը... Մեկ-մեկ քիչ է մնում գայլի պես ոռնաս, կամ էլ հարբես ու ոչինչ չզգաս, ոչինչ չցանկանաս....

(Հեռախոսը զանգում է, վերցնում է լսափողը)

Լսում եմ, ընկեր Դավթյան, այո, իհարկե, հիշում եմ՝ Մինասյան, հիշում եմ, ընկեր Դավթյան... բայց դա անլուծելի հարց է... Օրենքով... եթե ես այդ հարցը նիստի դնեմ… կարծում եք կանցնի՞… Համաձայնեցվա՞ծ է... ո՞ւմ հետ... ներեցեք, ընկեր Դավթյան, սակայն օրենքով... *(Լսափողը ցած է նետում)*

Սրիկա… Ասում է բաժնի վարիչ դարձիր, որ օրենքը աչքս խոթես, ասում է՝ էդ օրենքները մենք չե՞նք գրում... Ես նրան ինչպես ասեմ, որ այդ Մինասյան կոչվածը ավազակը փողը սկզբում ինձ էր առաջարկում, հանգիստ ժպտալով... կարծես սիգարետ էր հյուրասիրում ինձ… ծաղրում էր ինձ… ձեռք էր առնում... ասում է ր՝ խելոք-խելոք կանես... ճիշտ էր ասում, էլի.... Ազատ, մինչև ե՞րբ, ախր մինչև երբ… էդ անասունի ծիծաղը որ հիշում եմ...

(Կիսատ շիշն է փնտրում, ուզում է խմել)

ԱԶԱՏ - Վերջ տուր, Տիգրան, ամոթ է, թույլ ճանապարհ ես բռնել… Ախր մի քեզ նայիր, էդպես ո՞ւր կհասնես: Մի կարգին առողջություն էլ չունես:

ՏԻԳՐԱՆ - Դու քո առողջության մասին մտածիր… թույլ ճանապարհ ես ընտրել.. խոսելը հեշտ է... դու ուժեղ ճանապարհ ես ընտրել... Դոկտորական դիսերտացիան թողած, մի օրվա համար խոսող մեքենա ես հավաքում,- «Բարև ձեզ, ընկեր Մակաուզյան»:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱԶԱՏ - Իմն ուրիշ է:

ՏԻԳՐԱՆ Ուրիշ չէ, Ազատ, ուրիշ չէ... նույնն է: Ախր մինչև երբ, մեր ղեկավարներին պետք է թվա, թե օրենքները ուրիշների համար է, որ իրենք օրենքից դուրս են...

(Ազատին կոնյակ է առաջարկում)

Խմիր, որ մոռանանք, Ազատ ջան, բայց ո՞րը մոռանաս...

ԱԶԱՏ - Տուն գնա, Տիգրան, լսում ես:

(Ազատը գնում է: Տիգրանը երկար նայում է նրա ետևից, ապա վերցնում է լսափողը)

Տաթևիկ, ես գնում եմ պետշին... Հասկացար... Ով հարցնի՝ Պետշինում եմ: նախագահից բացի: Եթե նա հարցնի ինձ շտապ տուն զանգիր հասկացա՞ր: Ապրես:

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

(Տիգրան Մանվելյանի ճաշասենյակը: Վաչեն տանն է: Ներս է մտնում Տիգրանը)

ՏԻԳՐԱՆ - *(Զարմացած)* Վաչե, վաղո՞ւց ես ծխում…

ՎԱՉԵ - Մաման լաց էր լինում ամբողջ գիշեր…

ՏԻԳՐԱՆ - Իսկ ինչո՞ւ դասի չես:

ՎԱՉԵ - Եղոյանի դասն էր, փախա… նստիր: Նստիր, խոսենք, հայրիկ:

ՏԻԳՐԱՆ - Ինչպե՞ս թե փախար... Դա ի՞նչ բան է...

ՎԱՉԵ - Բա ի՞նչ անեմ... ինչքան տեսնում է, քո մասին է հարցնում:

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ է հարցնում:

ՎԱՉԵ - Էն օրը դաս պատասխանեցի, ոչ մի սխալ չարեցի, բռնեց «4» նշանակեց: Ասացի ինչո՞ւ եք 4 դնում: ես բոլոր հարցերին պատասխանեցի ուզում եք, էլի հարցեր տվեք: Ասաց՝ իսկ դու ի՞նչ ես ուզում «5» ասացի ես: Ես էլ բնակարան եմ ուզում, ասաց, իսկ հայրդ ինձ չի տալիս... Ինչո՞ւ տուն չես զալիս, հայրիկ:

ՏԻԳՐԱՆ - Այդպես էլ ասաց, ամբողջ դասարանի ներկայությամբ:

ՎԱՉԵ - Հա, ու հիմա ինչքան տեսնում է հարցնում է՝ հը՞, «5» չես ուզում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Խելագար է, ինչ է, այդ մարդը

ՎԱՉԵ - Չէ, հայրիկ, հարբեցող է...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ է, ոնց թե հարբեցող է: Դասի էլ է հարբած զալիս:

ՎԱՉԵ - Միշտ:

ՏԻԳՐԱՆ - Այ քեզ բան: Բա ղեկավարները չե՞ն նկատում: Ենգոյան… Ենգոյան: Չեմ հիշում, մոռացել եմ:

ՎԱՉԵ - Ինքը քեզ չի մոռանում... Պապ, խնդրում եմ քեզ, շատ եմ խնդրում, էլ չխմես:

ՏԻԳՐԱՆ - Ենգոյան, Ենգոյան, կասես թող ինձ մոտ գա: Գնա դասի:

ՎԱՉԵ - Պապ, տուն կգաս: *(Վաչեն դուրս է գնում: Դռան զանգ)*

ՏԻԳՐԱՆ - Սկսվեց… *(Գնում բացում է դուռը: Ներս է մտնում տիկին Հռիփսիմեն)*

ՀՌԻՓՍԻՄԵ - Տիգրան ջան, տեսա, որ եկար, ես էլ եկա:

ՏԻԳՐԱՆ - Գիտեմ, որ տեսած կլինեք:

ՀՌԻՓՍԻՄԵ - Ինձ երկու հատ ձու է պետք, վաղը կառնեմ, կբերեմ:

ՏԻԳՐԱՆ - Իսկ դուք չգիտեք, կա թե չե:

ՀՌԻՓՍԻՄԵ - Չէ:

ՏԻԳՐԱՆ - Զարմանալի է, հիմա կտեսնենք:

ՀՌԻՓՍԻՄԵ –Այսինքն պիտի լինի, որովհետև Անահիտը երեկ բերեց:

ՏԻԳՐԱՆ - Երկուսը հերի՞ք է:

ՀՌԻՓՍԻՄԵ - Ուզում ես վեց հատ բեր:

(Տիգրանը մի տուփ ձու է բերում)

ՏԻԳՐԱՆ - Համեցեք...

ՀՌԻՓՍԻՄԵ – Տիգրան ջան, ճի՞շտ է, որ ասում են…

ՏԻԳՐԱՆ - Ճիշտ է...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀՌԻՓՍԻՄԵ - Ի՞նչը..

ՏԻԳՐԱՆ - Որ ասում են…

ՀՌԻՓՍԻՄԵ - Հարբեցող անտեր *(Հռիփսիմեն դուրս է գնում: Գալիս է Անահիտը)*

ՏԻԳՐԱՆ - *(Աշխատում է առույգ ձևանալ)* Անահիտ... Ուզում ես քեզ մի ծիծաղելի բան պատմեմ:

(Անահիտը լուռ է:)

Հիվանդը հարցնում է՝ բժիշկ ջան ճի՞շտ է, որ հավի միսը աչքերին օգուտ է: Իհարկե ասում է բժիշկը: Երբևէ տեսել եք, որ աղվեսը ակնոց հագնի…

Էլի՞ պատմեմ...

(Անահիտը լուռ է:)

Ամուսինը հարցնում է կնոջը՝ սիրելիս, կարո՞ղ ես կռահել, թե որտեղ եմ եղել այս գիշեր:

- Իհարկե կարող եմ,- ասում է կինը: –Բայց սկզբից դու քո տարբերակը պատմի: Մի հատ էլ պատմե՞մ...

ԱՆԱՀԻՏ - *(Ակամայից ժպտում է:)* Տիգրան, ժամանակը չէ՞ որ լուրջ խոսենք:

ՏԻԳՐԱՆ - Եթե այդպես ես գտնում, ուրեմն ժամանակն է:

ԱՆԱՀԻՏ - Ժամանակը վաղուց է անցել, Տիգրան: Ես համբերում էի, դիմանում էի զսպում էի ինձ, մտածում էի, թե ժամանակավոր բան է, բոլորի հետ էլ մի պահ կատարվում է, կանցնի… Բայց սխալվեցի:

ՏԻԳՐԱՆ - Անահիտ... Անահիտ...

ԱՆԱՀԻՏ - Մեր տունը քանդվում է, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Լավ մի չափազանցրու... Ինչ մի արտառոց բան է պատահել:

ԱՆԱՀԻՏ - Տիգրան, դու ամեն օր հարբում ես.., արդեն գիշերներն էլ տուն չես գալիս…

ՏԻԳՐԱՆ - Քանի՞ անգամ... Չէ, ասա, քանի՞ անգամ:

ԱՆԱՀԻՏ - Կարևորը թիվը չէ: Դու առաջվա Տիգրանը չես: Քեզ համար ընտանիք գոյություն չունի, քեզ համար երեխաներ գոյություն չունեն և վերջապես ես քեզ համար գոյություն չունեմ: Վերջին անգամ մենք երբ ենք միասին եղել, Հիշո՞ւմ ես...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ոնց թե, մի ամիս առաջ էլի ռեստորանում չէի՞նք:

ԱՆԱՀԻՏ - Ես ռեստորան չեմ ուզում, գետնի տակը մտնեն աշխարհի բոլոր ռեստորանները: Ես ուզում եմ, որ մենք երեկոները հենց այնպես դուրս գանք զբոսնելու, որ կինո գնանք, համերգ գնանք:

(Տիգրանը լուռ է:)

Մի նեղանա, Տիգրան... Դու արդեն հարբեցող ես դարձել:

ՏԻԳՐԱՆ - *(Բորբոքված)* Ես... Ես հարբեցողի նմա՞ն եմ:

ԱՆԱՀԻՏ - Եթե ամեն օր խմելու պահանջ ես զգում, ուրեմն հարբեցող ես:

ՏԻԳՐԱՆ - Ես եմ պահանջ զգում, ե՞ս... Եթե կուզես իմանալ, ես զզվում եմ խմիչքից:

ԱՆԱՀԻՏ - Այնքան ես զզվում, որ ուզում ես խմել վերջացնել աշխարհի բոլոր խմիչքները՝ իրար խառնած:

ՏԻԳՐԱՆ - *(Աշխատում է մեղմել:)* Հոգուդ մեղք մի արա, ջանս...

ԱՆԱՀԻՏ - Իմիջիայլոց այդ «ջանս» բառն էլ նոր ես սովորել:

ՏԻԳՐԱՆ - Թողնելո՞ւ ես խոսեմ: Երեխաների արև, թե ես մեղք ունեմ: Ի՞նչ ասեմ, բախտս այնքանով չի բերել, որ նախագահս խմող է, մեկ էլ զանգ է տալիս՝ թե դուրս գանք: Ի՞նչ անեմ, մերժե՞մ: Ո՞նց մերժեմ, մարդը չորս հոգու միջից ինձ ընտրեց ու առաջ քաշեց: Հիմա ասեմ, կներեք, կինս չի՞ թողնում: Ի՞նչ անեմ, մարդը պաշտոն տվեց...

ԱՆԱՀԻՏ - Ո՞ւմ էր պետք այդ պաշտոնը: Մենք դժբախտությունից բացի ինչ տեսանք...

(Լաց է լինում:)

ՏԻԳՐԱՆ - Ինչո՞ւ ես լաց լինում: Նախագահի հետ Սևան էինք գնացել: Ուշ էր: Ինքն էլ լավ էր մի քիչ, ստիպված մնացինք քրոջ տանը:

ԱՆԱՀԻՏ - Անցյալ անգամ էլ Դիլիջանում էիք միասին: Էլի նախագահի քրոջ տանը:

ՏԻԳՐԱՆ - Հետաքրքիր աղջիկ ես, մարդը չի՞ կարող երկու քույր ունենալ, որ մեկը Սևանում ապրի, մյուսն էլ Դիլիջանում... Չի՞ կարող:

ԱՆԱՀԻՏ - Կարող է… Հեռախոս էլ չունեին, որ զանգեիր...

ՏԻԳՐԱՆ - Այո, չունեին... Ի՞նչ գիտես, տիկին Հռիփսիմե՞ն է ասել... Հավատա, Անո ջան, քո արև, իմ ընտանիքը ինձ համար սրբություն է: Մի բան որ լիներ՝ տիկին Հռիփսիմեն

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

չէ՞ր ասի: Չի ասել, որ Սևանում էինք... Դե լավ, լավ... կատակում եմ... Վայ, դե հերիք է լաց լինես...

ԱՆԱՀԻՏ - Այո հերիք է… ես այսպես այլևս ապրել չեմ՝ կարող: Վճռիր՝ կամ մենք, կամ...

ՏԻԳՐԱՆ - Դուք, դուք, Անահիտ ջան.. . Բա ես ձեզ աշխարհի հետ կփոխե՞մ: Ուղղակի խրվել եմ, Անահիտ ջան, մի քիչ էլ դիմացի, նախագահին տեղափոխում են, ես էլ կազատվեմ, դուք էլ... Երդվում եմ քեզ, այսօրվանից, թե ես էլ մի գրամ բան խմեմ՝ ամոթ ինձ, ոչ մի գրամ, ձեր արև... Այնքան տանը նստեմ, որ հոգնես... Կգնանք ուր ուզում ես, և հենց առաջինը . մորդ տուն: Թեյ կխմեմ ու խելոք-խելոք կլսեմ նրա խրատները... Նարդի կխաղամ հորդ հետ ու կտարվեմ, որ ուրախանա…

ԱՆԱՀԻՏ - Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ անեմ, ուզում եմ, որ ժպտաս… Դե ժպտա, ժպտա... Մարգարիտներդ մի թափի, ափսոս են… Հիշո՞ւմ ես ինչ ասաց Վաչեն, երբ երկու տարեկան էլ չկար: Հիշո՞ւմ ես լաց էր լինում, հետո էլ թե վայ, մարգարիտներս թափվում են

ԱՆԱՀԻՏ - *(ժպտում է:)* Վաչեն չէր, Գոհարիկն էր:

ՏԻԳՐԱՆ - Հա՞. .. Սպասիր, այսօր... 24-ը չի՞....

ԱՆԱՀԻՏ - 24-ն է, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Ձայն էլ չես հանում... Այսօր լրացավ մեր ամուսնության 20 տարին: Ուրեմն սեղան ենք նստում: Ես և դու: Միայն մենք, ..

ԱՆԱՀԻՏ - Էլի սեղան...

(լսվում է դուդուկի մեղմ, հոգեպարար նվագի ձայնը:)

ՏԻԳՐԱՆ - *(Տեղից վեր է թռչում:)* Լևոնն է, հաստատ Լևոնն է: Նրա օյիններն են

(ներս է մտնում Լևոնը Տիգրանի հետ:)

ԼԵՎՈՆ - Բարև ձեզ տիկին, ընկեր Մանվելյանն այնքան է ձեր մասին պատմել, որ փողոցում էլ տեսնեի կճանաչեի: Շատ-շատ ուրախ եմ, որ ծանոթանում ենք: *(Մեկնում է վարդերի փունջը)*

ԱՆԱՀԻՏ - Շնորհակալություն, հրաշալի վարդեր են....

ԼԵՎՈՆ - Իմ այգուց է:

ԱՆԱՀԻՏ - Իսկապե՞ս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Անահիտ ջան, Լևոնը, որ ձկան պահածո է բացում, էլի ասում է իմ այգուց է:

(Անահիտը ծիծաղում է)

ԼԵՎՈՆ - Ընկեր Մանվելյան… Միանգամից մի մատնեք…

ԱՆԱՀԻՏ - *(Կամացուկ)* Տիգրան…

ԼԵՎՈՆ - Քույրիկ ջան, խնդրում եմ չանհանգստանաք… Կներեք, որ լսեցի, երաժշտի ականջ է: Ես մեղք չունեմ: Զանգի… Զրանգի…

(ներս են մանում Զանգին ու Զրանգին ուտելիքի զանազան փաթեթներով)

Տիկին Անահիտ ամեն ինչ պատրաստ է, միայն ափսեների մեջ դրեք ու բերեք:

ԶԱՆԳԻ - Զանգի…

ԶՐԱՆԳԻ - Զրանգի…

ԼԵՎՈՆ - Ամեն ինչը տեղը տեղի՞ն է:

ԶԱՆԳԻ - Ինչպես հրամայեցիք մայեստրո… Բարև ձեզ ընկեր Մանվելյան:

ՏԻԳՐԱՆ - Համեցեք տղերք, համեցեք: Վայ, Լևոն ջան… դու… դու իսկական ֆոկուսնիկ ես..

ԼԵՎՈՆ - *(Աչքով է անում)* Հը, սկիզբը ո՞նց էր…

ՏԻԳՐԱՆ - Գերազանց:

ԼԵՎՈՆ - Շարունակությունը հաջորդ համարում: Տղեք ջան քեֆ ենք անում:

(Նվագում է)

(Լևոնը դուդուկը ցած է դնում ու երգում է, երգի տակ ներս է մտնում Անահիտը, զանազան ուտելիքներով ու խմիչքով ծանրաբեռնված սայլակ սեղանիկով: Նորից է գնում ու վերադառնում նորանոր ափսեներով):

ՏԻԳՐԱՆ - Զայնդ անսպառ, Լևոն ջան: Տեսար, որ մեր 20-ամյակը իրեն-իրեն նշվեց…

ԶԱՆԳԻ - Ձեր քսանամյակը՞… Մի քիչ մեծ չե՞ք լինի, ընկեր Մանվելյան:

ԼԵՎՈՆ - Ամուսնության քսանամյակն է, վայրենի եղել ես, վայրենի էլ մնացել ես:

ԶԱՆԳԻ - Լսում եմ, մայեստրո…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ -Ախր սիրտս վկայում է, է, ախր հո զուր չէր, որ խոսող ձուկն ինձ ասաց, Լևոն ջան, տուն ես մտնելու, գուցե թե որևէ առիթ լինի, հո դատարկ ձեռքով չե՞ս գնալու: Վերցրու գոնե այս ֆրանսիական համեստ օծանելիքը: Նոր գնա....խնդրեմ...

ԱՆԱՀԻՏ - *(Ակամա հոտ է քաշում:)* Շատ շնորհակալություն....շատ շնորհակալություն: Մի քիչ անհարմար ստացվեց…Ինչ ասեմ, ձեր բերածով ամեն ինչ պատրաստ է:

(Տիգրանը Անահիտին խեղճ-խեղճ նայելով լցնում է բաժակները:)

ԼԵՎՈՆ – *(Բարձրացնելով բաժակը)* Տիկին Անահիտ, ընկեր Մանվելյան... Ձեր կենացը: Շնորհավոր լինի ձեր համատեղ կյանքը՝ 20 տարին: Աստված տա, որ ողջ առողջ ձեր ամուսնության 50-ամյակն էլ տոնենք և այդ մեծ ուրախության նվագողն էլ ես լինեմ, իմ անբաժան Զանգիի և Զրանգիի հետ:

(խմում է:)

Գիտե՞ք ինչ եմ նվագելու այդ օրը...*(երգում է)*

ՏԻԳՐԱՆ - Խմենք իմ Անահիտի կենացը:

ԱՆԱՀԻՏ – *(Կամացուկ)* Դու մի խմի, էլի...

ՏԻԳՐԱՆ - Եղա՞վ... Ուրեմն իմ Անահիտ աստվածուհու կենացը...

(Բոլորը հոտնկայս խմում են:)

ԶՐԱՆԳԻ – *(Հանկարծ տարօրինակ ձևով ծիծաղում է)* Հի, հի, հի...

ԼԵՎՈՆ - Քեզ ի՞նչ պատահեց, այ տղա...

ԶՐԱՆԳԻ - Ուրախացա... Առավոտվանից ուրախ–ուրախ եմ...

ԼԵՎՈՆ - Ինչի՞...

ԶՐԱՆԳԻ - Որ գիտեմ, երեկոյան խմելու եմ, առավոտվանից տրամադրությունս բարձրանում է: *(ծիծաղում են:)*

ԱՆԱՀԻՏ - Ես հիմա... Տեսնեմ ձուկը եփե՞ց: *(Դուրս է գնում:)*

ՏԻԳՐԱՆ - Լևոն, ո՞նց էիր ասում՝ հալալվեց, զուլալվեց … քանի չի եկել շուտ արա... *(Լցնում են բաժակները, խմում:)*

ԼԵՎՈՆ - Երեք-չորս, մի հատ էլ... *(նորից են խմում:)* Այսինքն էս ի՞նչ ենք անում: Սեղանի վրա էսքան խմե՞լ կլինի, եկեք մտնենք սեղանի տակ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ, ի՞նչ...

ԼԵՎՈՆ - Պիտի պարապե՞մ, թե չէ, Տիգրան ջան, շուտով գաստրոլների ենք գնալու Ճապոնիա... Էնտեղ ո՞վ է թողնում, որ սեղան նստենք… ծալապատիկ պիտի նստենք: Զանգի, Զրանգի....մտանք: Մտիր, ղու էլ նստիր, Տիգրան ջան... տիկին Անահիտին ուրախացնենք:

(Արագ-արագ ափսեներ ու խմիչք են վերցնում, մտնում սեղանի տակ, որի սփռոցի ծայրերը գետնին են հասնում. բարձր շշուկով:)

ԶԱՆԳԻ - Ձեր կենացը, մեծ ախպերներ...

ԶՐԱՆԳԻ - *(ծիծաղով:)* Պապիս ասածը...

(Ափսեն ձեռքին ներս է մտնում Անահիտը)

ԱՆԱՀԻՏ - *(շվարած)* Էս ո՞ւր գնացին... *(Շտապում է դուրս:)*

ԼԵՎՈՆ - *(Սեղանի տակից)* Տեղերում...

(Անմիջապես գրավում են իրենց տեղերը)

ԱՆԱՀԻՏ - Որտե՞ղ էիք:

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ...

ԱՆԱՀԻ Տ - Դուք...

ՏԻԳՐԱՆ - Մե՞նք: *(ծիծաղում է)* Բա կարծում էիր խմելը հե՞շտ է...

ԱՆԱՀԻՏ - Բայց ես չեմ խմել...

ԼԵՎՈՆ - Դե չխմող մարդու աչքին ինչ ասես կերևա, էլի, տիկին Անահիտ...

ԱՆԱՀԻՏ - Սպասեք, բա են մյուսը՞, ինչպես էիք ասում՝ հա Զրանգին ո՞ւր է…

ԶՐԱՆԳԻ – *(Սեղանի տակից:)* Այստեղ եմ, տիրուհի . . .

ԱՆԱՀԻՏ – Որտե՞ղ . . .

ԶՐԱՆԳԻ - Ճապոնական ձևով նստել եմ ու չեմ կարողանում վեր կենամ... Հանի, Զանգի...

(Նրան դուրս են բերում ափսեների ու շշերի հետ: Ծիծաղում են:)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՆԱՀԻՏ - Երեխաներ եք, իսկական երեխաներ... Տիգրան, դու է՞լ էիր, բա որ մեկը ներս մտներ: *(Քրքջում է)*

ՏԻԳՐԱՆ - Քեզ ուրախացնելու համար արեցինք, Անահիտ ջան:

ԶԱՆԳԻ - Սա մեր տեր Լևոնի օյիններից մեկն է... Մի անգամ էլ մի մորուքով ակադեմիկոսի սեղանի տակ մտցրեց, համոզեց, թե ամեն պատահական մարդ էլ սեղանի վրա քեֆ է անում, արի մենք սեղանի տակ քեֆ անենք... Ակադեմիկոսին շատ դուր եկավ, հետո ինչ անում էինք սեղանի տակից դուրս չէր գալիս:

ԼԵՎՈՆ - Զանգի, Զրանգի, նորապսակներին պարեցնում ենք:

(Սկսում են ուրախ պարեղանակ:)

ՏԻԳՐԱՆ - Անահիտ...

ԱՆԱՀԻՏ - Չէ, չէ... Անհարմար է.., *(Ուզում է փախչել, նվագողները փակում են ճանապարհը, Տիգրանը բռնում է ձեռքից, խորը գլուխ է տալիս, Անահիտը ստիպված սկսում է պարել: ներս է մտնում Հայկը:)*

ՀԱՅԿ - Բ-բարև ձեզ, ես...

ՏԻԳՐԱՆ - Բարի երեկո, տղա ջան, նստիր:

ՀԱՅԿ - Չէ, չէ… աս... Գոհարիկի հետ պարապելու ենք:

ՏԻԳՐԱՆ - Առաջ մեզ հետ կպարապես, հետո Գոհարիկի հետ... Դու Հայկն ես, չէ՞..

ՀԱՅԿ - Հայկն եմ....

ԼԵՎՈՆ - Բա ասում էիք փոքր-մոքր տղա է, իսկական տղամարդ է... Արի, ախպեր ջան, արի, ոնց որ քյավառցիներն են ասում. Մի բաժակ խմա՝ վրիցդ մարդահոտ գա...

ՀԱՅԿ - Ե՞ս, ես չեմ խմում…

ԼԵՎՈՆ - Չեղավ, Գոհարի ծնողների ամուսնության քսան տարին է, ախպեր ջան, մի նեղացնի.. . Համ էլ էդ որ օրվանից է խմելը կամավոր դարձել:

ՀԱՅԿ - Եթե այդպես է... Լավ... Ձեր կենացը... *(Խմում է, հազում:)*

ԶԱՆԳԻ - Անուշ, հեյ անուշ, ջուր հասցրեք, ջուր...

ԶՐԱՆԳԻ - Խմի, ախպեր, հանգցրե՞ց....

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ - Էդ չեղավ, շունչ քաշի…բան չասացիր, հյուսիսում հո չենք..

ՏԻԳՐԱՆ - Կարագ կեր... Էս մեկն էլ, սիրելի Հայկ, Գոհարի կենացը...Թե դու Գոհարի կենացը չես ուզում խմել. . .

ՀԱՅԿ - Ես. .. Ուզում եմ... լավ... Գոհարի կենացը, իմ ընկերուհու կենացը: Նա հրաշալի ընկերուհի է և ես ցանկանում եմ, որ նա երջանիկ լինի... *(Խմում է:)*

ԼԵՎՈՆ – *(Բաժակը լցնելով)* Էս մեկն էլ Գոհարի ծնողների կենացը:

ՀԱՅԿ - Չէ, չէ....ես …

ԶԱՆԳԻ - Գոհարի ծնողներին չե՞ս հարգում:

ՀԱՅԿ - Հարգում եմ:

ՏԻԳՐԱՆ - Կարագ կեր...

ԶՐԱՆԳԻ - Խմի, ախպեր ջան, խմի որ հասնես մեզ...

ՀԱՅԿ - *(Թույլ-թույլ ծիծաղում է)* Ձեզ հասնելը դժվար է, դժվար:

ԼԵՎՈՆ - Տեսաք, արդեն արտասանում է... Խմիր, տղա ջան, խմիր ու մի լավ բան ասա մեզ համար..

ՀԱՅԿ - Ես…Ձեր կենացը: *(խմում է)* Կուզեմ հիմի փչե զուռնեն, հարբած ըլիմ մինչև էգուց:

ԼԵՎՈՆ –Տեսաք միանգամից ուր հասավ: Էս մեկն էլ խմենք. Օղորմի գերեզմաններ…

(Հայկն այլևս նրանց չի լսում: Ձայնը գլուխը գցած արտասանում է)

ՀԱՅԿ - Ամեն մարդու ընկեր ըլիմ ու լաց ըլիմ մինչև էգուց… Ամեն մարդու ընկեր ըլիմ ու լաց ըլիմ մինչև էգուց…

ԶՐԱՆԳԻ - Հի, հի, հի… Բուքսավատ արեց:

ԶԱՆԳԻ – Լաց մի ըլի, ցավդ տանեմ…Առաջ գնա, առաջ: Սկոռոստը փոխի:

ՀԱՅԿ - Ամեն մարդու ընկեր ըլիմ ու լաց ըլիմ մինչև էգուց…

(Ներս են մտնում Գոհարը՝ ապա Վաչեն)

ԳՈՀԱՐ - Հա՞յկ, ի՞նչ ես անում այստեղ… ուշքի արի:

ՏԻԳՐԱՆ - Մի խանգարի…թող կարագ ուտի…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՅԿ - Ե՞ս…Հայրիկդ, Գոհար ջան, ցավդ տանեմ… ասաց մի-մի թաս…

ԳՈՀԱՐ - Դուրս արի այստեղից, Հայկ ջան… Հայրիկ, այս ի՞նչ եք անում… Ամոթ չէ..

ՏԻԳՐԱՆ – Ինչ, էդ ո՞վ է ինձ ամոթանք տալիս…դո՞ւ… իմ աղջիկը՞: Ինչ ենք անում… Իսկ դու զգաստ, զգաստ, երբ հայրիկդ է խոսում:

ԳՈՀԱՐ -Նողկալի է, նողկալի է…

ՏԻԳՐԱՆ –Պահ, պահ, նողկալի է…Սրան տեսեք… զգաստ, ասում եմ, ո՞վ է էս տունը պահողը:

ՎԱՉԵ - Ի՞նչ էպատահել, ի՞նչ է պատահել, հայրիկ ջան…

ՏԻԳՐԱՆ – Դու էլ մի բարի պտուղը չես… Ձեր հայրը սեղան է նստել, իսկ դուք… Ինչի չեք գալիս կանգնում կողքիս, մատուցում, սպասարկում՝ սրբիչները ձեռքերիդ գցած:

(Անահիտը ներս է մտնում)

ԱՆԱՀԻՏ - Տիգրա՞ն…

ՏԻԳՐԱՆ - Հա, Տիգրան, Տիգրան... Ի՞նչ… էս քո դաստիարակած լակոտները չե՞ն, էս քո փչացրած երեխաները չե՞ն... տես ոնց են խոսում իրենց հոր հետ... ես ձեր…

ԱՆԱՀԻՏ - Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ամբողջ քաղաքն իմ արևով է երդվում... Բոլորը…

ԼԵՎՈՆ - Զանգի, Զրանգի, ցրվեցինք...

ՏԻԳՐԱՆ - Ո՞ւր... էս տան տերը ես եմ… Թող սրանք դուրս գնան… Ռադ եղեք …

ԱՆԱՀԻՏ - Ամոթ է, խայտառակ եղանք... դու հարբած ես, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ... Ե՞ս… Ե՞ս եմ հարբած, ինձ կյանքներումդ տեսե՞լ եք հարբած... Նվագեք, ես պիտի պարեմ....պարեմ՝ տեսեք հարբած ե՞մ...

(նվագում են, Տիգրանը օրորվելով պարում է:)

Հարբա՞ծ եմ, հարբա՞ծ եմ, ինձ հարբած տեսել ե՞ք...

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Հասմիկի բնակարանը, նույն մեղմ երաժշտությունն է: Դռան զանգ)

ՀԱԱՄԻԿ - Ո՞վ է:

ՏԻԳՐԱՆ - Ես եմ, ջանս:

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ ես եկել:

ՏԻԳՐԱՆ - Դուռը բաց արա, ասեմ…

ՀԱՍՄԻԿ - Մի աղմկիր ու սուս ու փուս գնա: Գնա, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Դուռը բաց, ասեմ, էլի, ցավդ տանեմ:

ՀԱՍՄԻԿ - Չեմ բացի:

ՏԻԳՐԱՆ - Բաց արա, ասում եմ... Ուրեմն տանը մարդ կա՞, մարդ կա՞, ո՞վ է...

ՀԱՍՄԻԿ – Գնա…

ՏԻԳՐԱՆ - Հասմիկ, կջարդեմ դուռը: Հասմիկ, ամբողջ շենքը գլխիդ կհավաքեմ, բաց արա, ասում եմ, խայտառակ կանեմ...

ՀԱՍՄԻԿ - Մի գոռա, ես արդեն խայտառակված եմ...Դու քեզ ես խայտառակում, քեզ, բնակբաժնի վարիչ, հարգված մարդ…

ՏԻԳՐԱՆ - Կջարդեմ, ասում եմ, բաց արա, բաց արա՝ տեսնեմ| էդ ո՞վ է կողքիդ, որ լեզուդ բացվել է:

ՀԱՍՄԻԿ – *(բացում է դուռը)* Տես:

ՏԻԳՐԱՆ - Ո՞ւր է, Ո՞ւր է... Ո՞ւր գնաց...

ՀԱՍՄԻԿ - Սատանայի նման չէ՞ր, պոզով ու պոչով:

ՏԻԳՐԱՆ - Մարդ չկա՞, ուրեմն ոչ ոք չկա՞: Ներիր, Հասմիկ քան, ներիր... Խանդում եմ, խելագարվում եմ, մի օր չեմ տեսնում, գժվում եմ, սիրում իմ քեզ...

ՀԱԱՄԻԿ - Սիրում ես, մնա...

ՏԻԳՐԱՆ - Խմելու բան չունե՞ս...

ՀԱՍՄԻԿ - Չէ:

ՏԻԳՐԱՆ - Իսկականից չունե՞ս... Ձկան հրամանով և իմ խնդրանքով...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Գրպանից տափաշիշ է հանում ու խմում:)

Օֆ, հիմա ոնց որ խելքս գլուխս եկավ... Դուռն ինչո՞ւ ես ինձ վրա փակում:

ՀԱՍՄԻԿ - Դուռը դու ես փակել քեզ վրա:

ՏԻԳՐԱՆ - Հա՞... Ի՞նչ է պատահել, Հասմիկ, ախր մենք սիրում ենք իրար:

ՀԱՍՄԻԿ - Սիրում ես, մնա: Ես երեխա չեմ, ես խաղալիք չեմ: Սա էլ հյուրանոց չէ, որ գաս խմես, քնես ու գնաս:

ՏԻԳՐԱՆ - Բայց դու առաջ այդպես չէիր խոսում, հասկանում էիր ինձ, չէ՞…

ՀԱՍՄԻԿ - Հասկանում էի: Սպասում էի: Մտածում էի, որ քո սերն իսկական է Կհաղթի և դու…

ՏԻԳՐԱՆ - Հասմիկ ջան, բայց ես ի՞նչ կարող եմ անել, ես կին, երեխաներ ունեմ, ես իմ ընտանիքը...

ՀԱՍՄԻԿ - Ես էլ եմ ուզում իմ ընտանիքն ունենալ: Իմ կինը... Քո կինը կին է, իսկ ես կին չե՞մ… Ես նրանից տասնհինգ տարով ջահել եմ ու տասն անգամ գեղեցիկ... Ինչի՞ համար նա պետք է երջանիկ լինի, իսկ ես դժբախտ, ինչու պետք է ես գողի պես, մուրացիկի պես... Նա ինձանից ինչո՞վ է լավ... ինչո՞վ...

ՏԻԳՐԱՆ - Դե, դե, չհամարձակվես… ձայնդ… չհամարձակվես նրան քեզ հետ համեմատել:

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ. ..

ՏԻԳՐԱՆ - Որովհետև նա մայր է... որովհետև նա սրբություն է... նա բարձր է... իսկ դու...իսկ դու...

ՀԱՍՄԻԿ - Իսկ ես տականք եմ, ցեխ եմ, հա՞... բա ինչո՞ւ ես սրբությունդ թողած՝ իմ ոտքերն ընկնում... Ինչո՞ւ ես հատակին քարշ գալիս...

ՏԻԳՐԱՆ – Ի՞նչ... *(Ապտակում է:)*

(Հասմիկը ընկնում է հատակին: Լռություն: Պարզ լսվում է սաքսոֆոնի նվագը:)

ՀԱՍՄԻԿ - Ո՞ր մեղքիս համար... Ո՞ր մեղքիս համար:

ՏԻԳՐԱՆ – *(ծնկում է նրա առաջ)* Հասմիկ, Հասմիկ, Ներիր, ջանս, ներիր, ցավդ տանեմ... Իրեն-իրեն...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՍՄԻԿ - *(Ատելությամբ:)* Դու ո՞վ ես, որ ինձ խփում ես: Ի՞նչ իրավունքով, դո՞ւ ես ինձ պահում, ոչնչություն: Երկու տարի է գալիս ես խմում ու քնում, մի անգամ հարցրե՞լ ես, թե ոնց եմ ապրում, թի որտեղից եմ քեզ համար խմիչք գտնում ամեն օր: Երկու տարի է դու իմ հաշվին ես ապրում, ու դեռ խփո՞ւմ ես, հա՞ ախր ո՞ւմ ես պետք դու… Իբրև թե ես քո սիրուհին եմ, հա՞, սիրուհուն պահում են, ոչ թե ապրում նրա չնչին աշխատավարձի հաշվին… Սիրուհուն հագցնում են ոտքից գլուխ, կահավորում են տունը, ծովափ են տանում…

ՏԻԳՐԱՆ - Ես զող չեմ: Ես կաշառակեր չեմ…

ՀԱՍՄԻԿ - Ախր քեզ ո՞վ կաշառք կտա, ողորմելի, դու ո՞վ ես, որ քեզ կաշառք տան. .. Բոլոր հարցերը քեզ հետ մի շիշ օղիով են լուծում... Դու մի շիշ օղիով շրջանն էլ կծախես...

(Տիգրանը լուռ է:)

ՏԻԳՐԱՆ - Դու երբեք չես սիրել ինձ:

ՀԱՍՄԻԿ– Սիրել եմ... Չեմ հասկացել ու սիրել եմ....Կույր եմ եղել, կույր... երախտագիտության սովորական մարդկային զգացումը սեր եմ կարծել... Ու չեմ էլ հասկանում՝ ես քո ի՞նչն ես սիրել, ի՞նչը…

ՏԻԳՐԱՆ - Հերիք է... *(Ուզում է խփել)*

ՀԱՍՄԻԿ - Փորձիր, փորձիր, ես հենց հիմա սրբություն կնոջդ զանգ կտամ ու նախագահիդ… հենց հիմա…

ՏԻԳՐԱՆ - Չհամարձակվես… չհամարձակվես: Գնում եմ... Դեռ կտեսնենք, թե ով կփոշմանի... *(Շտապով դեպի դուռն է գնում)*

ՀԱՍՄԻԿ - Շիշդ, շիշդ մոռացար… ընկեր Մանվելյան:

(Տիգրանը թափ է տալիս ձեռքը ու դուրս է գնում, հետո ետ է դառնում, վերցնում շիշը ու առանց Հասմիկին նայելու դուրս գալիս: Հասմիկը լուռ նայում է նրա հետևից և սկսում է լաց լինել, ավելի ու ավելի հիստերիկ:)

(Հետին պլանում ալկոհոլիկների խումբը սկսում է երգել ու հաշվել՝ «Ալա-բա–լա–նիցա»…)

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տիգրան Մանվելյանի Ճաշասենյակը: Անահիտը ընկճված, մտացրիվ մաքրում է կա1ույքի վրա չեղած փոշին: Ներս է մտնում տիկին Հռիփսիմեն)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀՌԻՓՍԻՄԵ- Բարև, Անահիտ ջան....Մի զդալ տոմատ չե՞ս տա, տոլմա եմ եփում, տոմատս պրծել է… վաղը կառնեմ, կտամ..

(Անահիտը լուռ բերում մի տուփ տոմատ է տալիս)

Էսքան ինչ եմ անում... մի զդալ է պետք:

(Անահիտը լուռ է)

Հա, չմոռանամ, ամբողջ սրտով շնորհավորում եմ, այնքան ուրախ եմ ձեզ համար, Անահիտ ջան... Այնքան ուրախ եմ…

ԱՆԱՀԻՏ - Ինչի՞ համար, տիկին Հռիփսիմե...

ՀՌԻՓՍԻՄԵ - Բա նոր բնակարան չե՞ք ստացել, ծածկամիտ աղջիկ…

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ նոր բնակարան: Էլի երա՞զ եք տեսել:

ՀՌԻՓՍԻՄԵ - Ախր ինձանից ինչո՞ւ ես թաքցնում, չէ որ ես ձեզ սիրող, ձեր հաջողություններով ուրախացող մարդ եմ... չէ որ ես քեզ հարազատ եմ համարում ինձ: Դու կարծում ես ես ուրիշից տոմատ չէի կարող ուզել, բայց քեզնից եմ ուզում, որովհետև քեզ հարազատ եմ համարում:

(Անահիտը լուռ է)

Այնպես որ շատ ուրախ եմ ձեր նոր բնակարանի համար: Դե երեխաները մեծանում են, ո՞ր ծնողը չի մտածում իր երեխայի ապագայի մասին: Հիմա բնակարանի հարցը կյանքի հարց է…

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ բնակարան, տիկին Հռիփսիմե, ինչի՞ մասին եք խոսում:

ՀՌԻՓՍԻՄԵ - Վայ, կարող է դեռ չգիտես… քոռանամ ես, ուրեմն ակամա գաղտնիք եմ բացում, ուրեմն Տիգրանը ուզում է քեզ սյուրպրիզ անել, հաստատ, հաստատ ուզում է անակնկալ մատուցել...

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ անակնկալ...

ՀՌԻՓՍԻՄԵ - Տիգրանը մի նոր տուն է ստացել Ամիրյան փողոցի վրա...Քանի անգամ իմ աչքով իմ տեսել… մի երկու անգամ էլ, տեսել եմ, որ առավոտ շուտ դուրս է եկել էդ տնից, ախր իմ ավտոբուսը Ամիրյան փողոցով է անցնում... Էդ է, հաստատ տուն է ստացել ու հիմա վերանորոգում է, որ նոր ցույց տա քեզ… տեսնո՞ւմ ես ինչ տղա է, հիմա այդպիսի հոգատար ամուսիններ որտեղից...

ԱՆԱՀԻՏ - Չե՞ք սխալվում: Ձեր աչքով եք տեսել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀՌԻՓՍԻՄԵ - Այ, իմ սեփական աչքերով... Այնպես որ, ուրախացիր աղջիկ ջան. ուրախացիր, բայց իրեն ցույց մի տուր, թող հանգիստ սրտով իր սյուրպրիզը մատուցի քեզ: Վայ, տոլմաս վառվեց.. .

ԱՆԱՀԻՏ - Տոմատը մոռացաք:

ՀՌԻՓՍԻՄԵ - Է, մարդու գլխին խելք է մնում, այնքան հոգսեր ունեմ:

(Հեռանում է)

ԱՆԱՀԻՏ - Ճիշտ որ անակնկալ: Այսինքն՝ ինչ անակնկալ... Միայն հասցեն չգիտեի... *(Ներս է մտնում Գոհարը)* Գոհար, ի՞նչ է պատահել...

ԳՈՀԱՐ - Ոչինչ...

ԱՆԱՀԻՏ - Աչքերդ կարմրած են, աղջիկ ջան…

ԳՈՀԱՐ - *(Փղձկում է)* Ասում եմ՝ ոչինչ էլ չի եղել, ոչինչ:

(Իր սենյակն է շտապում)

(Ներս է մտնում Վաչեն, ձեռքին ինչ-որ սարք)

ՎԱՉԵ - Շնորհավորիր քո ապագա գիտնական որդուն, մայրիկ... Ստուգատեսում առաջին տեղ...

ԱՆԱՀԻՏ - Շնորհավորում եմ տղաս…

ՎԱՉԵ - Մի ամիս հետո իմ այս սարքի հետ Մոսկվա են հրավիրում: Համամիութենական ստուգատեսի… Կգա՞ս ինձ հետ, մամ ջան…

ԱՆԱՀԻՏ - Իհարկե, դու հո մենակ չես գնալու Վաչե ջան:

ՎԱՉԵ - Առանց քեզ ես միշտ էլ մենակ եմ, մամ ջան… Այնքան էի ուզում որ կողքիս լինեիր այսօր… Դե հիմա պատմեմ տես, տրանզիստորներն ու դիոդները այնպես էի դասավորել, ընդամենը մի փոքրիկ տախտակի վրա…

ԱՆԱՀԻՏ - *(Ակամա ժպտում է)* Մեկ է, տղա ջան, դրանցից ես ոչինչ չեմ հասկանում:

ՎԱՉԵ - Վայ, չհասկանալու ինչ կա, այ մամ, շղթայական ռեակցիայի սկզբունքով, տրիոդներն ու դիոդները... լավ, էլի մամ...

ԱՆԱՀԻՏ - Դե լավ, հետո, հետո... քաղցած չե՞ս…

ՎԱՉԵ - Ես երբ եմ կյանքումս կուշտ եղել, մամ ջան...սարքերս տեղավորեմ ու գամ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Աշխատելով ուղիղ քայլել սենյակ է մտնում Տիգրանը)

ԱՆԱՀԻՏ - Արդեն գողի նման ես մտնում սեփական տունդ:

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ... ե՞ս...

ԱՆԱՀԻՏ – Գոնե երեխաներիցդ ամաչեիր:

ՏԻԳՐԱՆ - *(Պոռթկում է)* Դե լավ էլի, Հասմիկ ջան, հասկացանք, էլի…

ԱՆԱՀԻՏ - Հասմի՞կ... հասցեն ունեի… միայն անունը չգիտեի: Ուրեմն Հասմիկ, հա՞…

ՏԻԳՐԱՆ - Ի՞նչ Հասմիկ, ո՞վ ասաց Հասմիկ... ի՞նչ ես քեզանից բաներ հնարում...

ԱՆԱՀԻՏ - Ինքդ ասացիր:

ՏԻԳՐԱՆ - Լավ՛ արեցի, շատ էլ լավ արեցի, դիտմամբ ուրիշի անուն տվեցի, որ բարկանաս ու նկատես ինձ: Որովհետև ես քեզ համար եղած-չեղած... որովհետև ես քեզ համար զրո եմ… որովհետև դու վաղուց մոռացել ես, որ ես քո ամուսինն եմ ու երեխաների հայրը: *(Ներս է մտել Գոհարը)*

ԳՈՀԱՐ - Հայրը՞, հայրը՞… դու... դու… դու ի՞նչ հայր ես… ես ամոթից գետինն եմ մտնում, որ դու իմ հայրն ես…

ԱՆԱՀԻՏ - Գոհար...

ՏԻԳՐԱՆ - Քեզ ի՞նչ մեղու կծեց... Ի՞նչ ես ավել–պակաս խոսում... Քեզ ի՞նչ եմ արել... Քեզ...

ԳՈՀԱՐ - Դու, դու... միայն դու ես իմ դժբախտության պատճառը...

ՏԻԳՐԱՆ - Խելագարվել ես, ինչ է, ես քեզ ի՞նչ եմ արել, աղջիկս…

ԳՈՀԱՐ - Ինձ աղջիկս չասես... ինձ աղջիկ չասես, քո պատճառով, քո... Հայկը չի խոսում հետս: *(Լաց է լինում)* Ասում է քո հայրը հարբեցող է... հարբեցող...

ԱՆԱՀԻՏ - Վերջ տուր, հանգստացիր, հանգիստ խոսիր, հանգիստ խոսիր, Գոհար:

ԳՈՀԱՐ - Ախր ոնց հանգիստ խոսեմ, մամ ջան, ոնց հանգիստ խոսեմ... Ո՞նց… Ինչո՞ւ է մեզ խայտառակում, հերիք չի՞...

ՏԻԳՐԱՆ - Աշխարհը քանդվեց… Հայկ... Հայկ ամեն տեղ էլ կգտնես, հայր չես գտնի...

ԱՆԱՀԻՏ - Ինչպես դու ես գտել Ամիրյան փողոցում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՏԻԳՐԱՆ - Տո լավ եմ անում, ձեր ինատու ամեն ինչ էլ պիտի անեմ: Եթե դուք ինձ հայր չեք համարում, ես էլ ձեզ չեմ ընդունում, Ես իմ գլխի տերն եմ ու ազատ մարդ եմ... ազատ…

(Ներս է մտել Վաչեն)

ՎԱՉԵ - Հայրիկ, հայրիկ ջան, բավական է, էլի: Էլի խմա՞ծ ես…

ՏԻԳՐԱՆ - Հա... Խմած եմ, լռեք, երբ տան մեծն է խոսում:

(Մի պահ լռություն: Հանկարծ հնչում է ուրախ մի պարեղանակ)

ՏԻԳՐԱՆ - Եկան... եկեք, ձեր ցավը տանեմ... սաղ սուտ է:

ԱՆԱՀԻՏ - Ես այլևս չեմ դիմանա:

ՎԱՉԵ - Դրանք մեզնից ի՞նչ են ուզում...

(Պարելով, նվագելով, ծամածռվելով ներս են մտնում Լևոնը, Զանգին, Զրանգին)

ԼԵՎՈՆ - Դահլիճում ծիծաղ, ծափահարություններ… Զանգի, Զրանգի, ձկան հրամանով և իմ խնդրանքով…

ԱՆԱՀԻՏ – Վերջ տվեք, խնդրում եմ: Խնդրում եմ… Հեռացեք այստեղից:

ԼԵՎՈՆ - Ներեցեք, տիկին Անահիտ, ինքն է կանչել...

ՏԻԳՐԱՆ - Հա, ես եմ կանչել, ես եմ իմ ընկերներին խնդրել, որ, գան ուրախանանք… Ես ուտող–խմող, ազատ մարդ եմ... Նվագեք, Լևոն ջան. նվագեք, ես պարել եմ ուզում…

ԼԵՎՈՆ - Տիգրան ջան, պետք չէ, Տիգրան...

ՏԻԳՐԱՆ - Դուք ո՞ւմ կողմից եք, հը՞... Նվագեք, ասում եմ, նվագեք... Պար–պար–պար…

(Պարում է հարբած, կատաղած, օրորվելով)

ԱՆԱՀԻՏ - Ի՞նչ անեմ, տեր աստված, ի՞նչ անեմ...

ՏԻԳՐԱՆ -Ուժեղ, ուժեղ խփիր, Զանգի... խփիր... խփիր... ինձ աշխատանքից ազատեցին… Եվ ես ուրախ եմ… ուրախ… Կեցցե ազատությունը., Զանգի խփիր, խփիր... խփիր...

(Տիգրանի պարը հետզհետե դառնում է ավելի մոլեգին, աննորմալ: Թվում է, թե հիմա կխելագարվի)

ՎԱՉԵ - *(Կատաղած հարձակվում է նվագողների վրա, խոսում է՝ լաց լինելով)* Ինչ եք անում, ի՞նչ եք անում... Բա դուք մարդ չե՞ք, չե՞ք տեսնում... Մեղք է, չէ՞…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԼԵՎՈՆ - Ախր մենք ի՞նչ անենք, այ բալա, մենք էլ ենք ձեռքը կրակն ընկել:

ՏԻԳՐԱՆ - Ո՞վ է մեղք, ե՞ս... Ես Տիգրան Մանվելյանն եմ, ես ճանաչված ու հարգված մարդ եմ, Չե՞ք ուզում, ես էլ չեմ ուզում... գնում եմ, հեռանում եմ... Հիմա վեր կկենամ ու կհեռանամ:

(Մնում է տեղում անշարժացած: Նվագողները ոտքերի թաթերին հեռանում են: Տխուր երաժշտություն է հնչում: Ասես թաղում է: Երկար լռությունից հետո տեղից բարձրանում է Անահիտը., մոտենում է ամուսնուն և համբուրում նրա ճակատը: Ինչպես հանգուցյալին են համբուրում: Հետո հեռանում է: Նրանից հետո մոտենում են Գոհարն ու Վաչեն: Համբուրում են հոր ճակատը և լուռ հեռանում: Լռություն:

Տեղից բարձրանում է Տիգրան Մանվելյանը, մոտենում բեմեզրին):

ՏԻԳՐԱՆ -Մենք ձեզ ներկայացրինք իրական մի պատմություն: Չկարծեք, խնդրում եմ, թե հիվանդանոցում գտնվող այս մարդիկ ձեզանից պակաս մարդիկ են եղել:

Նրանք նախկին իրավաբաններ են, նախկին բժիշկներ, նախկին գրողներ, նախկին վարպետներ, նախկին պատասխանատու աշխատողներ, նախկին մարդիկ:

Եվ թող ոչ ոք չպարծենա:

(Խումբը սկսում է երգել)

Լսո՞ւմ եք: Ալա–բալա–նի-ցա»… Ո՞ւմ վրա կավարտվի մանկամիտ այս երգի խոսքերը. Ալա–բալա–նի–ցա... Ո՞վ է հաջորդը: Հաջորդը…

(Վարագույր)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org